23 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 31(4650)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Կոնգրեսականները դատապարտել են 1988 թ. հայերի ջարդերը Սումգայիթում

ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում կոնգրեսական **Ֆրենկ Փալոնն** իր ելույթում նշել է, թե Սումգայիթի հայկական ջարդերը հայ ժողովրդի հանդեպ ադրբեջանական ագրեսիայի մեկ օրինակն են միայն, որից երկու տարի հետո Ադրբեջանից անհետացել է 450 հազարանոց հայկական համայնքը: Ադրբեջանի ղեկավարությունը իրականացրել է հայ բնակչության էթնիկ զտում եւ զանգվածային արտաքսում: Փալոնն անհրաժեշտ է համարում, որ ԱՄՆ-ը ագրեսիվ հարեւաններով շրջապատված Հայաստանի անվտանգության երաշխավորը լինի: Հանրապետական կոնգրեսական Էն Էշուն էլ ընդգծել է, որ իր ընտանիքի անդամները փրկվել են Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունից, իսկ 1988-ի սումգայիթյան իրադարձությունների դեպքում պատմությունը կրկնվել է. «Պետք է խստորեն դատապարտել էթնիկ խմբերի հանդեպ իրականացվող նման բռնության դեպքերը՝ անկախ նրանից, թե երբ եւ որտեղ են դրանք տեղի ունեցել: Անգամ 96 տարի հետո ԱՄՆ Կոնգրեսը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը», ասել է նա: Մ. Խ.

# Սեյրան Օհանյանն անհրաժեշտության դեպքում Սաֆար Աբիեւին կհիշեցնի 1993-ի մարտը

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշխարհի որեւէ բանակում գրանցվում են հաջողություններ եւ անհաջողություններ: Հայկական բանակը բացառություն չէ, սակայն գլխավորն այն է, որ կարողանում է իրականացնել երկրի սահմանների ու ժողովրդի անվտանգության պաշտպանությունը: Սա պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանի** գնահատականն է: Նախարարն այս առնչությամբ անգամ բանաձեւ է մշակել. «Հայ ժողովրդի ապագային նվիրված ջանքերը պետք է ուղիղ համեմատական լինեն մեր հարեւանների տարածքներին եւ հակադարձ համեմատական մեր տարածքներին», ասաց նա երեկ ԵՊՀ-ում կայացած հանդիպման ժամանակ:



Օհանյանի ներկայացմամբ՝ բանակում կարգապահությունը տարեցտարի ամրապնդվում է, հրամանատարներն ու այլ ղեկավար անձինք տարաբնույթ պատահարների դեմ կանխարգելիչ աշխատանքներ են կատարում: Նա փաստում է, որ վերջին տարիներին հայկական բանակում ինժեներական սարքավորումները կատարելագործվել են, ստեղծվել են մարտական հերթապահության իրականացման համար անհրաժեշտ անվտանգության համակարգեր: «Եթե տեղի է ունենում որեւէ խախտում, եթե հակառակորդը խոցում կամ վիրավորում է, դա նշանակում է, որ տեղում զինծառայողն ինքը չի պահպանել անվտանգության կանոնները: Շատ հազվադեպ է պատահում, երբ հակառակորդի դիպուկ կրակոցով հենց խրամատախորշի մեջ ունենանք կորուստներ: Սակայն եթե հայկական կողմը հակառակորդի պատճառով է կորուստներ ունենում, հակառակորդը պատժվում է: Չի եղել դեպք, երբ մենք առաջին գծում ունենանք կորուստներ, եւ հակառակորդը կրկնակի չպատժվի»: Գեներալ-գնդապետը հավելում է, որ հաջողություններով ուրախանում են, սակայն չեն դադարում մտածել խնդիրների լուծման ուղղությամբ ու «փորձում են դափնիների վրա չնիրհել»:

«Այն սադրանքները, դիպուկահարների կրակը կամ դիվերսիոն հետախուզական գործողությունները, որոնք փորձում են իրականացնել մեր հակառակորդները, ստանում են արժանի հակահարված ու պատասխան եւ դեռ ավելին՝ մենք փորձում ենք պարտադրողի դերում լինել առաջին գծում», ասաց նախարարը՝ հավելելով, որ 2010 հայկական բանակի համար սպառազինության եւ ռազմական տեխնիկայի ձեռքբերման առումով աննախադեպ տարի էր:

Տես էջ 2

ՆՈՒՅՆԸ ԿՀՈՐԴՈՐԻ՞ ԲԱՔՎՈՒՄ

# Սեմնեբին՝ հրաժեշտ տալիս. «Վրաստանը պետք է ուղիղ երկխոսություն հարթի Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ»

**Վրաստանին ԵՄ հատուկ ներկայացուցիչն իր առաքելության ավարտին խորհուրդ է տալիս ուղղակի երկխոսության մեջ մտնել ինչպես Աբխազիայի, այնպես էլ Հարավային Օսիայի հետ, իսկ Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար գնալ փոխզիջումների: «Ռոսբալտի» համաձայն, այսպիսի հայտարարություն է արել երեկ Թբիլիսիում հանդիպումների շարք անցկացրած ԵՄ Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին:**

**Փետրվարի 21-ին մեկնարկած երկօրյա այցի շրջանակներում Սեմնեբին Վրաստանի ղեկավարության եւ օրենսդիրների հետ հանդիպումներից հետո, ըստ վրացական լրատվամիջոցների, հրաժեշտի ասուլիս է տվել: ԵՄ հատուկ ներկայացուցիչը նշել է, որ Եվրոմիությունը Հարավային Կովկասում հաջող դերակատարություն է ունեցել, ընդգծելով, թե ԵՄ-ն հատուկ ակտիվություն է դրսեւորել Վրաստանում առաջացած խնդիրների լուծման հարցում:**

**Վրաստանի համար վերջին հինգ տարիները բարդ գնահատելով՝ Սեմնեբին դրանք, այդուհանդերձ, արգասաբեր է համարել: 2008-ի օգոստոսյան պատերազմն էլ այդ երկրի համար փորձություն որակելով՝ ԵՄ հատուկ ներկայացուցիչը հայտարարել է, թե այսօր արդեն Վրաստանը «վերադարձել է նորմալ իրավիճակին»:**

**Որոշ տեղեկությունների համաձայն, փետրվարի վերջին Սեմնեբին կլինի նաեւ Ադրբեջանում, որից հետո կավարտի իր առաքելությունը ներկայիս պաշտոնում, ինչպես արդեն հայտարարել է ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը:**

**«Ռուսաստանի հետ հարաբերությունները վերականգնելու համար կողմերը պետք է որոշակի զիջումների գնան: Ինչ վերաբերում է հարաբերություններին Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ, ապա դրա համար Վրաստան պետք է նրանց հետ ուղղակի երկխոսություն հարթի»:**

**Հետաքրքրական է, թե ԵՄ հատուկ ներկայացուցիչը որքանով է հետեւողական իր մոտեցումներում եւ արդյոք Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի պաշտոնի առաքելության ավարտին նմանատիպ խորհուրդ կարող է ասել նաեւ Ադրբեջանում, թե՞, այդուհանդերձ, ԼՂՀ-ի հետ ուղիղ երկխոսություն սկսելու համար Ռուսաստանի նման մի պետության կողմից ԼՂՀ ճանաչում է հարկավոր:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մեդվեդեւն ու Լուկաշենկոն՝ անհանգիստ

**Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող ողբերգական դրսեւորումներով հեղափոխությունները հանգիստ չեն տալիս տարածքից շատ ավելի հեռու գտնվող պետությունների ղեկավարներին: Հետաքրքրական է, որ երեկ դրանց անդրադարձել է Ռուսաստանի նախագահը, իսկ ժամանակային առումով նրանից մի փոքր ավելի վաղ՝ Բելառուսի նախագահ Լուկաշենկոն: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը մտահոգություն է հայտնել, թե իրավիճակը կարող է հանգեցնել խիտ բնակեցված պետությունների մասնատման, ինչի հետեւանքով իշխանության ղեկին կարող են հայտնվել մոլեռանդական շերտերը: Այս կարգի սցենարն, ըստ Ռուսաստանի նախագահի, նաեւ Ռուսաստանի համար է նախապատրաստված եղել, սակայն դա իրականություն չի դարձել եւ չի էլ կարող դառնալ: Այս մասին Դմիտրի Մեդվեդեւը խոսել է Հակահաբեկչական ազգային կոմիտեի նիստի ընթացքում՝ նշելով, որ բոլոր դեպքերում Մերձավոր Արեւելքի իրադարձությունները չեն կարող չազդել Ռուսաստանի իրավիճակի վրա:**

**Իսկ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն միանգամից թափանցիկ ակնարկներ է արել, թե չի բացառում զինված ուժերի ներգրավումն այն դեպքերում, երբ սահմանադրական կարգին վտանգ կսպառնա: Վերջինս այդ մասին խոսել է զինված ուժերի ներկայացուցիչների հետ հավաքում: Նա նաեւ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցողի անդրադարձներին դիմակայելու մի նոր ուղղություն է նշել Բելառուսի համար՝ արտաքին քաղաքական ոլորտում ազգային անվտանգության պահպանումը, նկատել, թե դեկտեմբերին նախագահական ընտրությունների ժամանակ եւ դրանց հաջորդած իրադարձությունները ցույց են տվել օտարերկրյա հատուկ ծառայությունների կազմակերպած դավադրության մասին, իսկ իշխանությունը տապալելու ծրագրերը գալիս էին Գերմանիայից եւ Լեհաստանից: Բելառուսի նախագահը համոզված է, որ այդ օրերին իրենք պաշտպանել են երկրի սահմանադրական կարգը: Նա բերել է 80-միլիոնանոց Եգիպտոսի օրինակը, որտեղ ընդվզել է 1 մլն մարդ, ու նրա խոսքով՝ այդ 1 մլն մարդը երկիրը խառնել է. իրադրությունը փրկել է բանակը՝ հանգիստ գործելով:**

**Թե ինչ էին խոսել մեկ օր առաջ մեր երկրի պաշտպանության գերատեսչության օպերատիվ հավաքում մեր երկրի անվտանգության պատասխանատուները, ինչ հղումներ են արել Մերձավոր Արեւելքի թեմային՝ մենք, իհարկե, ընդհանուր ձեւակերպումների հետեւում չիմացանք:** Մ. Խ.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

հրապարակում է

Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի 2010թ. նվիրատուների անվանացանկը եւ խորին շնորհակալություն հայտնում բոլորին: Նվիրատուների անվանացանկը այբբենական կարգով հրապարակում ենք մեր օրաթերթի չորս հաջորդական՝ փետրվարի 22-ի, 23-ի, 24-ի եւ 25-ի համարներում: Այսօր տպագրում ենք ցանկի երկրորդ խմբաքանակը:

# «Հայկական Բաքվի» պատմության մասին կայքէջ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը ներկայացնում է Բաքու քաղաքի հայ համայնքի հասարակական, մշակութային եւ գործարար կյանքը լուսաբանող իր բնույթով եզակի եռալեզու կայքէջը՝ baku.am: Կայքէջում զետեղված հարյուրավոր լուսանկարներն ու փաստային բացիկները լուսաբանում են հայկական ընտանիքների, հայապատկան շենքերի, Բաքվում լույս տեսած հայկական մամուլի, գրահրատարակչության, գովազդային հայտարարությունների եւ ընդհանրապես Բաքու քաղաքում հայկական երբեմնի մշակութային ներկայության պատմությունը: Առանձին բաժնով ներկայացված են Բաքու քաղաքում 1905, 1918, 1990 թվականներին տեղի ունեցած հայկական կոտորածները լուսաբանող փաստաթղթեր եւ լուսանկարներ:

Հ. Ա.

# «Լիբիան չենք թողնելու իտալացիներին կամ թուրքերին»

## *Հայտարարել է կրտսեր Քադդաֆին երկրում առաջացած քաոսի համար մեղադրելով Թուրքիային*

***Նոր, ավելի մեծ արյունահեղություններ են սպասվում Լիբիայում: Մոամմար Քադդաֆին երեկ գիշեր, կրկնելով նախորդ օրը որդու՝ Սեյֆուլիսլամի սպառնալիքները քաղաքացիական պատերազմի մասին, որին ստորեւ անդրադառնում է «Ազգի» վերլուծաբանը, բառի իսկական առումով ահաբեկեց իր հայրենակիցներին՝ պատիժ, գնդակահարում բոլոր ըմբոստներին, «հրդեհվի պիտի ամեն բան, պիտի եռա ամեն ինչ, կռվելու եմ մինչեւ վերջին կաթիլը իմ արյան»: Նա, մեջբերելով իր հեղինակած «Կանաչ գրքից» հատվածներ, կոչ արեց իրեն հավատարիմ ցեղախմբերին իջնել փողոց եւ «դավաճանների դասը տալ…»:***

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հունվարի առաջին կեսին Թունիսում ծայր առած հակակառավարական ցույցերը, վերաճելով վարչակարգերի դեմ ժողովրդական զանգվածների խռովությունների, նախ տարածվեցին Եգիպտոսի գլխավորությամբ Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, ապա Մերձավոր եւ Միջին Արեւելքում, ներառյալ Իրանը, Պարսից ծոցի երկրներն ու Արաբական թերակղզին: Ժողովրդական խռովությունների աշխարհագրությունը ներկայումս ձգվում է Իրանից մինչեւ Մարոկկո: Նույնիսկ Մասուդ Բարզանիի իշխանության դեմ ընդվզում է Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի բնակչությունը:

Խռովությունների ալիքի տակ տապալվեցին Թունիսի եւ Եգիպտոսի նախագահները: Թեեւ Հորդանանի եւ Մարոկկոյի թագավորներին այդպիսի ճակատագիր ըստ ամենայնի չի սպասում, սակայն Բահրեյնում ակնհայտ է սուլթանին սպառնացող վտանգը: Դա թերեւս պայմանավորված է խաղաղ ցուցարարների դեմ զենքի գործադրմամբ, որի հետեւանքով Բահրեյնում սպանվել էր 6 ցուցարար:

Սպանվածների թիվը հարյուրների է հասել Եմենում եւ հատկապես Լիբիայում, որտեղ, ըստ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների, ցուցարարների դեմ բացի վարձկան դիպուկահարներից, օգտագործվում են նաեւ ռազմանավերն ու ռազմական ինքնաթիռները: Վերջին տվյալներով Լիբիայի բանակը օդից եւ ծովից ռմբակոծում ու հրետակոծում էր ցուցարարներին: Այս գործողությունները հատկապես մասսայական բնույթ են ստացել, երբ մինչ այդ երկրի նախագահին աջակցող ցեղապետերը հակադրվել են Մուամար Քադդաֆիին, իսկ հոգեւոր դասը՝ ուլեման, նրա սպանությունն արտոնող հրովարտակ՝ ֆեթվա է արձակել:

Տես էջ 5

# Հայաստանի հարեւանները՝ ԱՊՀ «ամենազինվողները»

Փետրվարի 21-ի Ադրբեջանի պաշտպանության նախարարության պաշտոնական հաղորդագրության համաձայն, «Ադրբեջանի զինված ուժերի զորամասերից մեկում, ծանր հանցագործության հետեւանքով սպանվել են 7 զինծառայող»: Բացի սրանից, Ադրբեջանի ՊՆ-ն նաեւ հաղորդել էր. «Փետրվարի 20-ին հայկական զինուժի բացած կրակի հետեւանքով Ֆիզուլիի շրջանում վիրավորվել է մեկ ադրբեջանցի զինծառայող, իսկ Նեւթաչալինսկի շրջանում մեկը զոհվել է»:

Սրանից առաջ, **«Ազգը»** փետրվարի 18-ի համարում հրապարակեց ԼՂ պաշտպանության բանակի հաղորդագրությունը, որի համաձայն փետրվարի 17-ի առավոտյան ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գոտու հյուսիսարեւելյան հատվածում, Ջրաբերդի ուղղությամբ, ադրբեջանական կողմը դիմել էր դիվերսիոն գործողության: «Հանդիպելով ՊԲ առաջապահ ստորաբաժանումների կուռ պաշտպանությանը, թշնամու հատուկ նշանակության ջոկատայինները դիմել են փախուստի: Նախնական տվյալներով՝ ադրբեջանական կողմն ունի կորուստներ, իսկ ղարաբաղյան զինուժը կորուստներ չի կրել», նշվում էր հաղորդագրության մեջ:

Երեկ արդեն ադրբեջանական կողմը այլ իրողության մասին է խոսում, կամ ավելի շուտ ի հայտ է եկել 7 սպանված զինծառայողների առնչությամբ իրավիճակի «վկա»՝ եւս մեկ ադրբեջանցի զինվորը, որը թերեւս ի հայտ է եկել հանդարտեցնելու զոհերի առնչությամբ Ադրբեջանում առաջացած լարված իրավիճակը:

Որ բանակում զոհերի առումով ոչ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, ոչ էլ անգամ զոհերի հարազատները որեւէ տեղեկություն չեն ցանկացել տալ ադրբեջանական լրատվամիջոցներին, հուշում է, որ երեկվա տեղեկությամբ «միջադեպին ներկա ու կենդանի մնացած զինվորը» ի հայտ է եկել պարզաբանումներ տալու համար: Իսկ տվյալ դեպքում պարզաբանում հենց կնշանակի հայտարարելը, թե զոհեր են եղել ոչ թե հայկական կողմի վրա դիվերսիոն հարձակման հետեւանքով, այլ զինվորներին միջեւ տեղի ունեցած միջադեպի պատճառով:

Այդուհանդերձ, կենդանի մնացած «վկայի» մասին տեղեկությունները թերեւս առատորեն տարածեցին երեկ ադրբեջանական կայքէջերն ու գործակալությունները, սակայն նշվում էր, թե տեղեկությունը ստացվել է սեփական, ոչ պաշտոնական աղբյուրներից:

Մեր դիտարկումը բոլոր նմանատիպ իրավիճակներում եղել է այն, որ ադրբեջանական կողմը որպես կանոն նախ ժխտում է որեւէ զոհի առկայությունը, սակայն մի քանի օր անց «միջադեպեր են տեղի ունենում ադրբեջանական բանակում եւ զոհեր: Սակայն եւս մեկ դիտարկում, ավելի շուտ ահազանգ պետք է բարձրաձայնել միշտ առ այն, որ շփման գծում զոհերի թիվը գնալով մեծանում է, ղարաբաղյան հակամարտությունը «սառեցված»-ի փոխարեն «եռացող» են կոչում, սակայն աշխարհիս հզորները աչք են փակում անկարգ բանակը զինող Ադրբեջանի գործողությունների վրա:

Ռուս փորձագետ Վլադիմիր Մուխինի՝ «Նեզավիսիմայա գազետայում» տպագրված հետազոտության համաձայն, նախկին խորհրդային երկրներից (բացի բալթյան երկրներից) ոչ մեկում արմատական վերազինումներ տեղի չեն ունեցել այն դեպքում, երբ բացառություն են կազմում մեր երկու հարեւանները՝ Վրաստանն ու Ադրբեջանը: Ընդ որում, Ադրբեջանի պարագայում երկրի սպառազինության, նաեւ նավատորմի զինման վրա ռեկորդային ռեսուրսներ են ծախսվում, եւ դա ոչ միայն ԱՊՀ երկրների հետ համեմատությամբ:

Ադրբեջանի պարագայում զուտ սպառազինության վրա 2011-ին ծախսվելիք 3,1 մլրդ դոլարին կարելի է ավելացնել նաեւ 1,36 մլրդ դոլար գումարը, որ նախատեսված է ծախսել ռազմական արդյունաբերության կարիքների համար: Համախառն ներքին արդյունքի համեմատությամբ զգալի գումարներ է սպառազինության վրա ծախսում նաեւ Հայաստանը, սակայն այդ գումարը բացարձակ մեծությամբ տասնյակ անգամ զիջում է Ադրբեջանին:

Որքան էլ տխուր է իրողությունը, թե Ադրբեջանը այդպիսի հսկայական գումարների ներդրման ֆոնին է հայտարարում պատերազմելու մտադրության մասին, բնավ էլ մխիթարական չէ այն, որ թեեւ Վրաստանի «պատերազմելու ցանկությունը սահմանափակել են», սակայն Վրաստանը ԱՊՀ երկրների մեջ սպառազինությունների վրա ծախսվող գումարների չափով երրորդն է՝ զիջելով նախ Ռուսաստանին, ապա նաեւ Ադրբեջանին:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Սեյրան Օհանյանն անհրաժեշտության դեպքում Սաֆար Աբիեւին կհիշեցնի 1993-ի մարտը

*1-ին էջից*

**«Բայց մենք փորձում ենք մեր ուժերը կենտրոնացնել որակական չափանիշների ու մարտական ոգու ձեւավորման ուղղությամբ», նշեց նախարարը: Օհանյանի գնահատմամբ՝ բանակը գործում է հակառակորդի հետ լարվածության պայմաններում, սակայն դա չի ազդել, որ հայկական բանակը մի թիզ հող զիջի եւ պատրաստ է իրականացնել իր առջեւ դրված խնդիրները:**

**Օհանյանը հիշեց, որ 1993-ի մարտին, երբ ինքը ԼՂՀ ՊԲ շտաբի պետն էր, հանդիպել է Ադրբեջանի ներկայիս պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւին՝ քննարկելու ԼՂ շուրջը անվտանգության գոտու ստեղծման հարցը: Խնդիրը դրված էր շփման գծից 25 կմ հետ քաշել ծանր զինտեխնիկան: «Մենք չունենք խորություն, մեր երկիրն այնքան էլ մեծ չէ, մենք հետ կքաշենք 5 կմ, իսկ դուք՝ 25 կմ», ասել է Օհանյանը: Քննարկումը վերածվել է վեճի:**

**«Ուրեմն մենք առաջ կգանք», հավելել է Օհանյանը: «Փորձե՛ք», պատասխանել է Աբիեւը, ինչին ի պատասխան Օհանյանը հակադարձել է. «Փորձելու բան չկա, ինչպես միշտ ճողոպրելու եք հայի առջեւից»:**

**«5-6 շրջանները հենց այդ ժամանակ ազատագրվեցին: Չգիտեմ, Ադրբեջանի պաշտպանության նախարարն այդ մասին հիշո՞ւմ է, թե՞ չէ, բայց երբ օրը գա ու հարկ լինի, ես դրա մասին նրան կհիշեցնեմ»:**



## Մարդու իրավունքները բանակում

**ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) եւ «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությամբ երեկ «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ «Մարդու իրավունքները բանակում» թեմայով քննարկում: Մեկօրյա քննարկման նպատակն է անդրադառնալ բանակում տիրող իրավիճակին, հուզող խնդիրներին ու արատավոր երեւույթները կանխարգելելու մեխանիզմներ առաջարկել: Պաշտպանության փոխնախարար Արա Նազարյանի ներկայացմամբ՝ նախարարությունում մտահոգված են բանակում մարդու իրավունքներին առնչվող հարցերով: Փոխնախարարի մեկնաբանությամբ՝ ուսումնասիրություններով պարզվել է, որ բանակում հանցագործություններ կատարում են հիմնականում պատշաճ կրթական մակարդակ չունեցող անձինք:**

**ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանի փոխանցմամբ՝ ԱԺ-ում զինված ուժերի հետ կապված երեք տեսակի կարգապահական կանոնագրքի նախագիծ է քննարկվում: Մարտի 10-ին նախարարության ներկայացուցիչների ու միջազգային փորձագետների մասնակցությամբ տեղի կունենան բաց լսումներ վերոնշյալ երեք նախագծերի վերաբերյալ: Կարապետյանը համոզված է՝ օրենքով պետք է ամրագրվեն հրամանատարների ու զինվորների պարտականություններն ու իրավունքները: ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահը կարեւորեց Հայաստանում զինվորական օմբուդսմենի հաստիքի ստեղծումը:**

**Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանի գնահատմամբ էլ Հայաստանի զինված ուժերը հարավային Կովկասում ամենամարտունակն են, հարգված են ու վստահելի, սակայն բանակի ուժը միայն մարտունակության եւ զենք ունենալու մեջ չէ. անհրաժեշտ է ապահովել բանակի կրթվածությունն ու հետեւել կարգապահությանը: Վերջին շրջանում բանակում տեղի ունեցած սպանություններն ու ինքնասպանությունները մտահոգիչ են: Հետեւաբար պետք է կարգապահական խախտումների նկատմամբ լինել անհանդուրժող: Նրա գնահատմամբ՝ կարգապահական կանոնագրքի ընդունումը չափազանց կարեւոր է, բայց առավել կարեւոր է, թե ինչպես է կյանքի կոչվելու: «Մարդիկ, ովքեր չպետք է լինեն զինված ուժերում, ուղղակի այնտեղ չպետք է լինեն: Սա է մեխանիզմը»:**

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# Երեւանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք, սակայն մայրաքաղաքում բացակայում է գրքի նկատմամբ հարգանքը



**1993-ից տիկին Մարթան ամեն օր առավոտյան ժամը 9-ին քայլերն ուղղում է Աբովյան փողոցի անցում՝ գիրք վաճառելու: Ավելի քան 10 տարի նա աշխատել է գրախանութում: Բայց նոր կարգերի հետ փոխվեց նաեւ գրքի հանդեպ վերաբերմունքը, գրախանութը սեփականաշնորհվեց ու վերածվեց խաղատան, Մարթան էլ շատերի օրինակով սկսեց գրքեր վաճառել փողոցում: Հետո գիրք վաճառողների համար տրամադրվեցին ավելի «քաղաքակիրթ պայմաններ», ու փողոցից գրքերը հայտնվեցին գետնանցումում:**

**80-ականներին Երեւանում գրախանութների թիվը գերազանցում էր 60-ը: Այսօր դրանց թիվը չի գերազանցում 10: Հիմա գրախանութ հասկացության տակ մարդիկ հասկանում են գրենական պիտույքների, փափուկ խաղալիքների ու պայուսակի վաճառք:**

**Միայն քաղաքի կենտրոնում նախկինում գործում էր շուրջ 10 գրախանութ: Այսօր դրանցից միայն երկուսն են գործում, այն էլ բավական թանկ գնացուցակով:**

**Ընթերցասեր հասարակությունը գիտի՝ որտեղից կարող է գնել անգամ չճարվող գիրքը՝ Աբովյանի գետնանցումից: Այստեղ փոշու, կեղտի ու ցեխի մեջ կարող ես գտնել Դոստոեւսկու «Ոճիրն ու պատիժը», Հյուգոյի «Թշվառները», Դանթեի «Աստվածային կատակերգությունը»: Տիկին Մարթան նշում է, որ գեղարվեստական գրքեր գնողներն այնքան էլ շատ չեն: Հիմնականում գնում են դասագրքեր ու բառարաններ: Լայն պահանջարկ չունեցող դասականների գրքերն էլ հայտնվում են գետնին՝ իրար գլխի թափված: Մարթան շատ է սիրում գիրք ընթերցել ու ցավ է ապրում, որ գրքերը հայտնվում են ցեխի ու փոշու մեջ, բայց այլընտրանք չունի: «Պայմաններ չկան, որտե՞ղ այսքանը պահեմ», բողոքում է նա: Մարթան հիշում է, որ մի անգամ երիտասարդ մի աղջիկ հեռուստատեսությամբ դիտել էր Ժերար Դեպարդիեի դերակատարմամբ «Կոմս Մոնտե Քրիստոն» ու որոշել էր ընթերցել: Դյումայի ամենահայտնի գործերից մեկը վաճառելու համար տիկին Մարթայից պահանջվեց մոտ կես ժամ: Մինչեւ մի քանի տասնյակ գրքերի տակից մի կերպ գտավ արդեն ճմռթված ու խունացած գիրքը: Մարթան փաստում է. այդ տեսարանին կհանդիպեք յուրաքանչյուր վաճառասեղանի մոտ: Գետնանցումում որեւէ պայման չկա, ոչ միայն գիրք պահելու, այլեւ ընդհանրապես առեւտուր կատարելու համար: Բայց առեւտրականները չեն լքում տարածքը: Ուրիշ հարմար տեղ չկա. բացի դրանից՝ քաղաքացիներն արդեն գիտեն, թե որտեղից պետք է գիրք գնել:**

**Եթե գետնանցումներում հնարավոր չէ քաղաքակիրթ պայմաններ ու առեւտուր կատարել, ապա գրախանութներն էլ քաղաքակրթությամբ առանձնապես չեն փայլում: Երեւանի կենտրոնում այսօր ընդամենը երկու գրախանութ է պահպանվել, բայց այնտեղ էլ, մեղմ ասած, գիրք վաճառելու կուլտուրան չի պահպանվել: Նախ աշխատողները տեղյակ չեն, թե որ բաժնում ինչ գիրք է վաճառվում, եւ ստիպված ես հսկայական խանութում փնտրել բաժինները: Յուրաքանչյուր քաղաքակիրթ երկրում գրախանութ մտնելիս կտեսնես մի անկյուն, որը տրամադրվում է նոր հրատարակված գրքերին: Ընթերցողին հնարավորություն է տրվում ծանոթանալու վերջին շրջանում հրատարակված գրքերի ցանկին եւ ընտրություն կատարել: Հայաստանում նման բան ոչ մի գրախանութում չես գտնի: Մեր հասարակությունում բացակայում է գիրք հարգելու մշակույթը: Ու թեպետ արդեն Հայաստանի տոնացույցում ավելացել է գիրք նվիրելու օրը, դա էլ իրավիճակում որեւէ փոփոխություն չի մտցնում, որովհետեւ գիրք հարգելը միայն վաճառելը կամ գնելը չէ, այլեւ ներկայացնելն է:**

**Արդյոք շատե՞րն են տեղյակ, մշակույթի նախարարությունը, Մայր աթոռն ու էլի բազմաթիվ կառույցներ տարեկան գոնե մի քանի տասնյակ հրաշալի գրքեր են հրատարակում Հայաստանի մշակույթի, պատմության մասին: Արդյոք դրանք հասանելի՞ են ընթերցողին՝ ոչ: Այս ամբողջի պատկերին, բացարձակ աննկարեւոր է, որ Հայաստանը ամեն տարի մասնակցում է գրքի միջազգային ցուցահանդեսների, տաղավարներ զարդարում, դա որեւէ կերպ չի օգնում մեր հասարակության մեջ գրքի դերի բարձրացմանը: Այս ամենն առավել ցավալի է, երբ հիշում ես, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2012-ին Երեւանը հռչակել է գրքի մայրաքաղաք: Ու մինչ քաղաքապետարանը նախապատրաստական աշխատանքներ կտանի Երեւանը դարձնելու գրքի մայրաքաղաք, միջոցառումներ կկազմակերպի, գիրքը որպես արժեք այդպես էլ մեր գիտակցության մեջ չի մտնի, որովհետեւ մեր երկրում գրքի հանդեպ հարգանք չկա:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ԱԺ նախագահի խորհրդականը թողել է պաշտոնը

Երեկ աշխատանքից ազատվելու դիմում է ներկայացրել Հայաստանի Ազգային ժողովի նախագահի խորհրդական Թաթուլ Մանասերյանը, որն իր այդ քայլը պայմանավորել է գիտական աշխատանքի անցնելու անհրաժեշտությամբ: **Ս. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Էկոնոմիկայի նախարարը դուրս հրավիրեց «շատ սիրելի» լրագրողներին

## *Արդյունաբերության զարգացման քաղաքականության քննարկման փուլը սկսելուն պես*

Երեկ էկոնոմիկայի նախարարության կոլեգիան եւ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահությունը համատեղ քննարկում էին կազմակերպել երկրի արդյունաբերության զարգացման քաղաքականության շուրջը:

Էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը** թվարկեց քննարկման ենթակա 3 հիմնական խնդիրներ: Առաջինը արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության զարգացման քաղաքականությունն է, երկրորդը՝ ներդրումային եւ գործարար միջավայրի բարելավումը, երրորդը՝ առանձին ներդրումային ծրագրերի քննարկումը: Նախարարը հայտարարեց, որ արտահանումը կլինի երկրի տնտեսական զարգացման գերակայությունը: Այդ ուղղությամբ պետության կողմից կատարվելիք քայլերից առաջինը օրենսդրական բարենպաստ միջավայր ապահովելն է: Այս առումով նշվեց, որ արտահանումը Հայաստանում ազատված է հարկերից եւ վճարներից:

Հաջորդը՝ գործընկեր երկրների հետ առեւտրային ռեժիմների հստակեցումն է: Տիգրան Դավթյանը տեղեկացրեց, որ ԱՊՀ երկրների հետ Հայաստանն ունի ազատ առեւտրի ռեժիմ, այժմ էլ քննարկվում է այդ ռեժիմը բազմակողմ դարձնելու: Եվրոմիության երկրների հետ մեր երկիրն օգտվում է GSP+ արտոնությունների ռեժիմ եւ առաջիկայում բանակցություններ կսկսվեն ազատ առեւտրի ռեժիմին անցնելու համար: Հիմնական խնդիրը, ըստ էկոնոմիկայի նախարարի, որակի եւ ստանդարտների հարցն է, որը զարգացնելու եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն ունի:

Առանձին ներդրումային ծրագրերի մասին խոսելով՝ Տիգրան Դավթյանը տեղեկացրեց, որ մի քանի միլիարդ դրամի արժողությամբ շուրջ 5 տասնյակ այդպիսի ծրագրեր կան: Հիմնականում ներդրումները կատարվելու են տեղական ներդնողների կողմից, կան նաեւ օտարերկրյա ներդնողներ:

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ **Արսեն Ղազարյանը** խնդրեց ժամանակ չկորցնել եւ արագացնել արդյունաբերության քաղաքականության մշակումը: Նա արտահանման առումով լուրջ խնդիր համարեց այլ երկրներ մուտք գործելու համար սերտիֆիկատների ձեռքբերման հարցը եւ անհրաժեշտ համարեց այս ոլորտում հայտնի ընկերությունների, որոնց սերտիֆիկատը ճանաչվում է միջազգայնորեն, մուտքը Հայաստան:

Լրագրողների հետ զրույցի ժամանակ Արսեն Ղազարյանն ասաց, որ արդյունաբերության զարգացման քաղաքականության մշակման համար հարկ է նախ՝ լուրջ գույքագրում կատարել՝ տեսնելու համար, թե ի՞նչն է պահպանվել՝ նյութատեխնիկական բազա, մարդկային ռեսուրսներ եւ այլն: Այնուհետեւ ներդրումների մասին օրենսդրությունը հարկ է կատարելագործել, անհրաժեշտ են նոր գործիքներ, նոր ռեժիմներ: Միաժամանակ, ՀԱԳՄ նախագահը նշեց, որ ճյուղեր կան, որոնք այլեւս վերականգնել եւ գործարկել հնարավոր չի լինի: Նա հայտնեց, որ միությունը գույքագրել է կարի արտադրությունների հնարավորությունները Հայաստանում: Ըստ նրա, այստեղ արդեն ներդրումներ են ներգրավվում, էժան գնով հումք է ներկրվելու Թուրքմենստանից: Աշխատանքներ պետք է տարվեն մեքենաշինության եւ էլեկտրատեխնիկայի զարգացման, ազատ տնտեսական գոտիների ստեղծման ուղղությամբ: Արսեն Ղազարյանը խոստացավ 2-3 ամսից հայտնել, թե որ ճյուղերն են մրցունակ:

Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանի եւ ՀԱԳՄ նախագահ Արսեն Ղազարյանի բացման խոսքերից հետո նախարարության ներկայացուցիչների եւ գործարարների միջեւ սկսվեց քննարկումը: «Բինկաթ» ընկերության տնօրենը խիստ կարեւորեց սննդամթերքի որակի վերահսկողության հարցը, ասելով, որ




տեղական հումքի հիման վրա հնարավոր կլինի ապահովել Հայաստանի կաթնամթերքի 1-2 ամսվա պահանջարկը, իսկ մսամթերքի՝ 1 ամսվա պահանջարկը: Մնացածը բավարարվում է արտերկրից ներմուծված կաթի փոշիով եւ մսով, որոնք հագեցած են հորմոններով, եւ չկա լաբորատորիա, որտեղ պետք է կատարվի փորձաքննություն: Իսկ հորմոններով կաթնամթերքի եւ մսամթերքի բացասական ազդեցությունը, որոնցից է Պարկինսոնի հիվանդությունը, ըստ ելույթ ունեցողի, երեւում է տարիներ հետո: Այս առումով «Բինկաթի» տնօրենը կարեւորեց, որ նախ կարողանանք ապահովել կաթնամթերքի եւ մասնավորապես պանրի ներքին պահանջարկը, ապա նոր մտածենք արտահանման մասին: Կամ էլ չափաբաժիններ սահմանել եւ տեղական շուկայում որոշակի քանակ իրացնելուց հետո արտահանել:

Այս խնդրահարույց հարցի քննարկման շարունակությանը, սակայն, ներկա գտնվող լրագրողները հնարավորություն չունեցան լսելու, քանի որ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը խնդրեց «շատ հարգելի, շատ սիրելի» լրագրողներին լքել դահլիճը եւ այս հարցի քննարկումը անցկացնել դռնփակ: Նախարարի նման վարքագիծն առնվազն տարօրինակ էր: Անհասկանալի էր, թե «քննարկում» կոչված հանդիպման հրավերն ինչո՞ւ էր արվել լրագրողներին, եթե նրանցից, հետեւաբար եւ հանրությունից, գաղտնի հարցեր կարող էին լինել: Կամ ինչո՞ւ պետք է սննդամթերքի անվտանգության առնչվող վերոնշյալ հարցը հանրությանը հայտնի չլինի: Ո՞վ եւ ի՞նչ ունի թաքցնելու այստեղ: Ակամա այն եզրակացությունն է առաջանում, որ էկոնոմկիայի նախարարությունը, որի կազմում է որակի տեսչությունը, այս հարցում լուրջ բացթողում ունի եւ չի ցանկանում, որ այդ մասին բարձրաձայնվի:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԲԵՅՐՈՒԹ

# Լիբանանում ՀՀ դեսպանը այցելել է ավանդական կուսակցությունների գրասենյակներ

**Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանը փետրվարի 20-ին այցելել է ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ հայկական ավանդական կուսակցությունների գրասենյակներ եւ հանդիպումներ ունեցել կուսակցությունների ղեկավարների ու վարչությունների անդամների, ինչպես նաեւ «Ազդակ», «Արարատ» եւ «Զարթօնք» թերթերի գլխավոր խմբագիրների հետ:**

**Այս մասին տեղեկացնում են ԱԳՆ լրատվական ծառայությունից: Ըստ աղբյուրի՝ դեսպանը ներկայացրել է որոշ մանրամասներ 2011-ին դեսպանության ծրագրած միջոցառումների առնչությամբ եւ հույս հայտնել, որ լիբանանահայ համայնքն ու բոլոր հայկական կառույցները կշարունակեն սերտ համագործակցությունը դեսպանության հետ, մասնավորապես Հայաստանի անկախության հռչակման 20-ամյակին նվիրված միջոցառումները բարձր մակարդակով անցկացնելու նպատակով: Քննարկվել են նաեւ առաջիկա ամիսներին նախատեսվող միջոցառումների մանրամասներ: Անդրադարձ է եղել Հայաստան-Լիբանան երկկողմ հարաբերություններին, Հայաստան-Սփյուռք գործակցության խորացման անհրաժեշտությանը, Լիբանանի հայկական առաջատար լրատվամիջոցների դերակատարությանը համահայկական կարեւորություն ներրկայացնող խնդիրների լուսաբանման գործում: Քննարկվել են տարածաշրջանային խնդիրներ, ինչպես նաեւ Լիբանանի ներքաղաքական վերջին զարգացումները՝ կապված նոր կառավարության ձեւավորման հետ:**

Հ. Ա.

# Orange MyFi. այսուհետեւ Wi-Fi ինտերնետն ամենուր է



**Երեկ Orange-ը ներկայացրեց նոր 3G/Wi-Fi մոդեմ, որն ամբողջությամբ փոխելու է Wi-Fi-ի մասին նախկինում եղած պատկերացումները: Նոր MyFi մոդեմին կարելի է միացնել մինչեւ 5 սարքավորում՝ համակարգիչ, հեռախոս, խաղային համակարգեր, եւ ստեղծել անձնական Wi-Fi Orange-ի ծածկույթում ամենուր՝ նույնիսկ գտնվելով շարժման մեջ:**

**«Մենք արդեն առիթ ենք ունեցել ներկայացնել այս սարքի հնարավորությունները Հայաստանում անցյալ տարվա հոկտեմբերին՝ Orange Expo նորարարական տեխնոլոգիաների ցուցահանդեսի շրջանակներում: Այն ժամանակ մենք չէինք նախատեսում MyFi-ը ներկայացնել Հայաստանում, սակայն տեսնելով մեծաթիվ այցելուների հետաքրքրությունը սարքի նկատմամբ՝ մենք հասկացանք, որ հաճախորդները սպասում են դրան: Ուրախ ենք առաջինը ներկայացնել մեր բաժանորդներին այս հետաքրքրական ու նորարարական սարքը, որը եւս մեկ անգամ փոխում է ժամանակի, տարածության ու Wi-Fi ինտերնետի հնարավորությունների մասին մեր պատկերացումները», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:**

**«Մենք MyFi-ի բաժանորդներին առաջարկում ենք մի քանի սակագնային պլաններ՝ սկսած ամսական 7.000 դրամից: Բաժանորդները կարող են ընտրել իրենց ամենահարմարը՝ ըստ իրենց անհատական կարիքների եւ օգտագործման ծավալների: Մոդեմը կարելի է ձեռք բերել երկու տարով բաժանորդագրվելու դեպքում եւ ընդամենը մեկ դրամով», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:**

**MyFi մոդեմը կարելի է օգտագործել Հայաստանի բոլոր մարզերում եւ նույնիսկ ամենահեռավոր համայնքներում Orange-ի ընդարձակ ծածկույթի շնորհիվ, որն այսօր հասանելի է արդեն Հայաստանի բնակչության 95%-ին:**

# Իրավիճակը ողբերգական չէ, բայց անելիքներ շատ կան

Որ Հայաստանում վերջին շրջանում որոշ ապրանքատեսակների գնաճ է արձանագրվել, գաղտնիք չէ. դա զգում է յուրաքանչյուր քաղաքացի: Հասկանալի է, որ մեր երկիրը չի կարող ապրել աշխարհից մեկուսացած եւ զերծ մնալ համաշխարհային շուկաներում այս կամ այն ապրանքատեսակի թանկացումից: Սակայն սա թանկացումների օբյեկտիվ պատճառն է, քանի որ առանձին դեպքերում ակնհայտ է նաեւ սուբյեկտիվ գործոնը, ինչի վառ վկայությունն էր, ասենք, անցած տարեվերջին պանրի եւ ձվի շուկայում ստեղծված վիճակը, երբ այդ ապրանքատեսակները թանկացան, սակայն այդպես էլ որեւէ տրամաբանական հիմնավորում չբերվեց: Գնաճի ցուցանիշներն ակնհայտ են նաեւ պաշտոնական վիճակագրության տվյալներում: Մյուս կողմից, նույն այդ տվյալները, որոնք հրապարակում է Ազգային վիճակագրական ծառայությունը, ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ վիճակն այնպիսին չէ, ինչպես փորձ է արվում ներկայացնել, այն է՝ բացառապես սեւ գույներով: Խոսենք թվերով: Ըստ ԱԱԾ տվյալների, 2010 թ. դեկտեմբերին Հայաստանում սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 109,4 տոկոս: 2011թ. հունվարին այդ գործակիցը նախորդ տարվա հունվարի համեմատ արդեն եղել է 110,6 տոկոս: 2010 թ. տարեկան կտրվածքով ՍԳԻ գործակիցը 2009-ի համեմատ կազմել է 108,2 տոկոս: Սա՝ այն պարագայում, որ 2010 թ. 2009-ի համեմատ ՀՆԱ-ն կազմել է 102,6 տոկոս: Համեմատության համար նշենք, որ, ասենք, 2005-06 թվականներին այդ ցուցանիշը համապատասխանաբար եղել է 100,6 եւ 102,9 տոկոս: Իսկ ահա նախկին ԽՍՀՄ այլ երկրներից, ասենք, Ադրբեջանում ՍԳԻ 2011 թ. հունվարյան ցուցանիշը նախորդ հունվարի համեմատ կազմել է 108,3, իսկ 2010թ. դեկտեմբերին՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ՝ 107,8 տոկոս, Ղազախստանում՝ համապատասխանաբար՝ 108,1 եւ 107,8, Ռուսաստանում՝ 109,6 եւ 108,8, իսկ Ուկրաինայում՝ 108,2 եւ 109,1 տոկոս:

Ինչ վերաբերում է պարենային ապրանքների գներին, ապա 2010 թ. դեկտեմբերին 2009 թ. դեկտեմբերի համեմատ այդ ցուցանիշը կազմել է 114 տոկոս, իսկ ահա 2011 թ. հունվարին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 115,8 տոկոս: Դարձյալ համեմատության կարգով նշենք, որ, օրինակ, Վրաստանում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար՝ 122,8 եւ 125,2 տոկոս: Նախկին ԽՍՀՄ մի քանի այլ երկրների համեմատ գնաճի մակարդակով փոքր-ինչ զիջում ենք, սակայն ընդամենը առավելագույնը՝ մեկ-մեկուկես տոկոսով: Օրինակ՝ Ռուսաստանում 2011թ. հունվարին նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը կազմել է 114,2, իսկ Բելառուսում՝ 114,8 տոկոս:

Ինչ վերաբերում է միջին ամսական անվանական աշխատավարձին, ապա 2010թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ աճը կազմել է 26 տոկոս եւ տարեկան կտրվածքով կազմել է 108852՝ 2009 թվականի 96019 դրամի եւ, ասենք, 2000 թվականի 22706 դրամի փոխարեն:

Այնպես որ, ամենապարզ հաշվարկները ցույց են տալիս, որ բնակչության սոցիալական վիճակը ծանրացել է. իհարկե, ոչ այնքան, որ կարելի լիներ խոսել աղքատության ծավալների խորացման կամ զանգվածային արտագաղթի մասին, բայց հասկանալի է, որ դա, մեղմ ասած, մխիթարություն չէ, եւ լուրջ անելիք ունեն համապատասխան պետական կառույցները՝ սկսած կառավարությունից մինչեւ Կենտրոնական բանկ կամ, ասենք, Տնտեսական մրցակցության հանձնաժողով: Խնդիր ունեն՝ կապված թե՛ գնաճի ներկա զարգացումների առանձնահատկությունների եւ գնաճը պայմանավորող հիմնական գործոնների ուսումնասիրության, թե՛ հատկապես սուբյեկտիվ գործոնների բացառման ուղղությամբ: Պետք է հուսալ, որ այդ ուղղությամբ վերջապես կոնկրետ քայլեր կարվեն՝ կոսմետիկ միջոցառումների կամ պաթետիկ հայտարարությունների փոխարեն: Առավել եւս, որ օրերս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի եւ դրամավարկային կոմիտեի անդամների հետ եւ նրանց հետ քննարկել գնաճի զսպման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները, այդ թվում՝ դրամավարկային քաղաքականության դերն ու հնարավոր ազդեցությունները:

**Հ. ՍԵՄԵՐՋՅԱՆ**

# Մուբարիզ Ահմեդօղլուն պարզապես կեղծարար է կամ տգետ

Արցախյան շարժման եւ ղարաբաղա- ադրբեջանական հակամարտության ակունքներին անդրադառնալով՝ Մուբարիզ Ահմեդօղլուն Day.az-ին ասել է. «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու եւ Հայկական ԽՍՀ մտնելու մասին որոշումից երկու օր անց Ասկերանի շրջանի տարածքում Ասկերանի եւ Աղդամի բնակիչներն անցկացրել են խաղաղ ակցիա: Հայերը կրակ են բացել եւ սպանել երկու երիտասարդ ադրբեջանցու:

ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Կատուսեւը, հանդես գալով կենտրոնական հեռուստատեսությամբ, հաստատել է երկու ադրբեջանցիների սպանության՝ ղարաբաղյան հակամարտության առաջին հեղված արյան փաստը: Հայերը պետք է գիտակցեն, որ իրենց կեղծիքը չի անցնում: Այն ոչ ճշմարտությունը, որ նրանք առաջ էին քարշել նախկինում, այժմ գործում է նրանց դեմ»:

Այս կերպ Ահմեդօղլուն «հերքում է» հայկական կողմի այն փաստարկը, որ անկախություն հռչակած ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանը պատերազմ է սկսել:

Նրա ջղաձգվածությունից պարզ հասկացվում է, թե ադրբեջանական կողմի համար որքան դժվար է միջազգային հանրության եւ հատկապես ԵԱՀԿ Մխ համանախագահների հետ շփումներում հակառակն «ապացուցել»: Ահա եւ տեղեկատվական տեխնոլոգիաների «մասնագետը» որոշել է շրջանառության մեջ դնել վարկած, որ «հակամարտության առաջին արյունը հեղել են հայերը՝ Սումգայիթից առաջ»:

Բայց Ահմեդօղլուն չունի հիմնավոր փաստարկներ կամ չի գիտակցում իր առջեւ իշխանությունների դրած խնդրի լրջությունը, դրա համար էլ փաստերը միտումնավոր կամ տգիտաբար խեղաթյուրում է:

Սկսենք նրանից, որ ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշման մեջ խոսք չկա Ադրբեջանական ԽՍՀ կազմից ԼՂԻՄ-ի դուրս գալու եւ Հայկական ԽՍՀ-ին միանալու մասին: Այնտեղ ընդամենն ասված է, որ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը միջնորդում է Ադր. ԽՍՀ եւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդին՝ քննարկելու եւ մարզի բնակչության մեծամասնության ձգտումների հաշվառումով դրականորեն լուծելու ինքնավար մարզը Ադր. ԽՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ մտցնելու հարցը:

Երկրորդ, ի՞նչ խաղաղ ակցիայի մասին է խոսքը, երբ բոլոր, այդ թվում եւ ադրբեջանցի հեղինակներն են վկայում, որ 1988թ. փետրվարի 22-ին Աղդամից դեպի Ասկերան է շարժվել մարդկային մի հսկա ամբոխ: Ընդ որում, ադրբեջանցի հեղինակները դա համարում են «բողոք ընդդեմ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ միավորման պահանջի»:

Իրականությունն այն է, որ ամբոխը հարձակվել է Ասկերանի շրջանի՝ Աղդամին սահմանակից գյուղերի վրա, իր ճանապարհին ավերել ինչ պատահել է, հրդեհել Խանաբադի այրաղացը եւ հասել մինչեւ Ասկերան շրջկենտրոնի մատույցները:

Նախկինում ադրբեջանական կողմը շրջանառել էր վարկած, թե իբր «վրեժով լցված բազմությանը կանգնեցրել է Խուրաման Աբասովան՝ ամբոխի ոտքի տակ նետելով գլխաշորը»: Այդ թեզն այնքան էր դուր եկել խորհրդային քարոզչությանը, որ կենտրոնական մամուլի պատվերով Եվգենի Եվտուշենկոն գրել էր «Լաչակ» բանաստեղծությունը:

Ի՞նչ է կատարվել Ասկերանի մատույցներում: Ոչ ոք սպանված չի տեսել: Տեղում նման փաստ չի արձանագրվել: Եվ միայն միջադեպից ժամեր անց ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Կատուսեւը, բայց ոչ թե կենտրոնական, այլ Ադրբեջանի հեռուստատեսության եթերում հայտարարել է, որ «Ասկերանի մոտ երկու ադրբեջանցի է զոհվել»:

Ավելի ուշ նաեւ ադրբեջանցի հեղինակներից մասնավորապես Զարդուշտ Ալիզադեն, հիմք ունենալով ականատես ադրբեջանցիների վկայությունները, գրել է, որ «առնվազն մեկ հոգի զոհվել է ադրբեջանցի միլիցիոների կրակոցից»:

«Առնվազն մեկ հոգու» արյան համար պատասխանատվությունն, այսպիսով, ծանրանում է ադրբեջանական կողմի խղճին: Իսկ առհասարակ, 1988 թ. փետրվարի 20-ի ուշ գիշերը, հեռանալով Ստեփանակերտից, ուր եկել էր, որպեսզի անձն գնով տապալի մարզխորհրդի նստաշրջանը, Ադր. ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Քյամրան Բաղիրովը Աղդամում հրավիրել է արտակարգ խորհրդակցություն՝ ԼՂԻՄ հարակից ադրբեջանական շրջանների ղեկավարների մասնակցությամբ: Այնտեղ ընդունվել է «հայերին խելքի բերելու անհետաձգելի միջոցառումներ սկսելու» որոշում: Ասկերանի վրա հարձակում ձեռնարկվել է այդ որոշման շրջանակներում:

Իսկ ավելի վաղ՝ փետրվարի 11-ին Ադր. ԿԿ կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մահամադ Ասադովը, որը մինչ այդ զբաղեցրել էր Շամխորի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը եւ կազմակերպել էր Չարդախլուի հայերի դեպքերը, իսկ ավելի ուշ նշանակվել էր ՆԳ նախարար, Ստեփանակերտում ի լուր մի քանի հարյուր մարդու հայտարարել էր. «Եթե այս ամենին վերջ չտաք, ապա 100 հազար ադրբեջանցիներ կներխուժեն ԼՂ եւ այն կվերածեն գերեզմանոցի»: Նույն օրերին իշխանության հանձնարարականով գրվել, բազմացվել եւ տարածվել է Բախտիար Վահաբզադեի «Հողը» բանաստեղծությունը, որտեղ նա, դիմելով «տմարդի հարեւանին», ասում էր.

***Քանի՞ անգամ եմ աչքերդ հանել // Հողիս վրա աչք տնկելու համար:***

Ահա այդպես է իրավաքաղաքական խնդիրը վերաճել միջէթնիկական հակամարտության: Հայտնի չէ, թե այն տարիներին ինչ «փետակ էր բանեցնում» Ահմեդօղլուն, բայց ադրբեջանում ուրիշ գաղափարախոսներ եղել են, որ առաջնորդվել են «ո՞վ է հայը, որ մեր դեմ թքոտա» սկզբունքով եւ հազարավոր, տասնյակ հազարավոր զոմբիացածների մղել խելացնորության եւ նողկալի մարդասպանության՝ Ասկերանից մինչեւ Սումգայիթ, Կիրովաբադ, Բաքու: Մինչեւ ԼՂՀ-ի դեմ պատերազմի սանձազերծում, որի մասին, ի դեպ, Ադրբեջանի պետքարտուղար Լալա Հաջիեւան 1993թ. ասել է. «Մենք 120 օր Շուշիից հրթիռահրետակոծել ենք Ստեփանակերտը», ընդհանուր առմամբ ԼՂՀ մայրաքաղաքն ու մյուս բոլոր բնակավայրերը պատերազմի մեջ են եղել ավելի քան մեկ տարի՝ 1991թ. ապրիլին սկսված «Կոլցո» ռազմագործողությունից մինչեւ Հայաստանի հետ մարդասիրական միջանցքի բացումը 1992թ. հունիսին:

Սա է իրողությունը: Եվ միջազգային հանրությունը քաջատեղյակ է դրան:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Հոր մերձավորնե՞ր, թե՞ կնոջ ընտանիք

## *Ադրբեջանում «պայքարում են կոռուպցիայի դեմ»*

Փետրվարի 21-ից Բաքվում եւ Թբիլիսիում Իսրայելի դեսպանատները վերականգնեցին իրենց աշխատանքը: Հիշեցնենք՝ Թել Ավիվը «տեխնիկական պատճառներով» դադարեցրել էր դեսպանատների գործունեությունը Ադրբեջանում եւ Վրաստանում: Ավելի վաղ, սակայն, Իսրայելի Ահաբեկչության դեմ պայքարի կոմիտեն Հարավային Կովկասի երեք պետությունները ներառել էր իր կազմած այն երկրների ցուցակում, որտեղ «առկա է ահաբեկչության վտանգ»: Այս «բացահայտումից» հետո կոնկրետ Բաքվում ոչ միայն փակվեց Իսրայելի դեսպանատունը, այլեւ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան հորդորեցին իրենց քաղաքացիներին կամ չմեկնել Ադրբեջան, կամ մեկնելիս ձեռնարկել «անվտանգության բոլոր միջոցառումները», քանի որ «Ադրբեջանում առկա է ահաբեկչության վտանգ»:

Ավելին՝ փետրվարի 17-ին, երբ Մեթյու Բրայզան հենց նոր էր Իլհամ Ալիեւին փոխանցել իր՝ ԱՄՆ դեսպանի հավատարմագրերը, հայտարարեց. «Ադրբեջանում ահաբեկչության վտանգի մասին տեղեկությունները բավականին լուրջ էին»:

Այս հայտարարությունից անմիջապես հետո Իսրայելը եւս մեկ անգամ, կրկին «տեխնիկական պատճառներով», փակեց իր դեսպանատունը Բաքվում եւ Թբիլիսիում, եւ միայն փետրվարի 21-ին ադրբեջանցի լրագրողներին հաջողվեց կապվել իսրայելցի դեսպան Միխաել Լավոն Լոտեմի հետ, որը «ավետելով», որ դեսպանատունն այսուհետեւ աշխատում է, ասաց. «Մենք ունեինք տեխնիկական խնդիրներ՝ հեռախոսային կապի հետ կապված, այժմ այդ խնդիրները հաղթահարված են»: Հավելենք նաեւ, որ դեռեւս հայտնի չէ, թե ի՞նչ կապ ունի եւ ունի՞ արդյոք Իսրայելի՝ Բաքվում դեսպանատան փակումը այն հանգամանքին, որ Ադրբեջանը ակտիվացնում է հարաբերությունները Պաղեստինի հետ, որոշ դիվանագիտական փաստաթղթերում էլ անգամ անվանելով «Պաղեստինի պետություն»:

Ինչեւէ, այս ամենն առայժմ ենթադրությունների ոլորտից է, իսկ փաստացին այն է, որ ինչ սկսվել է արաբական որոշ երկրների հեղափոխական ալիքը, Ադրբեջանում պետական ամենաբարձր մակարդակով որոշել են պայքարել կոռուպցիայի դեմ, ավելին, Իլհամ Ալիեւը հրահանգ է իջեցրել՝ «արմատախիլ անել այն»: Միայն հատկանշական է, որ Ալիեւը կոռուպցիայի դեմ ազգային պայքարի սկզբնակետ որպես վերցրել է բավականին ուշագրավ ուղղություն: Խոսքը Ադրբեջանի արտակարգ իրավիճակների նախարար Քեմալեդին Հեյդարովի, նրա ընտանիքի եւ նրա մերձավոր-ազգական-ծանոթպաշտոնյաների մասին է:

Այս ամենն ուշագրավ է այնքանով, որ Հեյդարովի ընտանիքը, ըստ WikiLeaks-ի, Ադրբեջանում ազդեցության երկրորդ, իսկ որոշ ոլորտներում էլ առաջին ընտանիքն է: Մյուս ազդեցիկը Փաշաեւներն են, ու եթե հաշվի առնենք, որ Իլհամ Ալիեւը «հարգելի պատճառներով» չի կարող հակակոռուպցիոն պայքար ծավալել նաեւ վերջիններիս դեմ, քանի որ այդ ընտանիքին է պատկանում առաջին տիկին Մեհրիբան Ալիեւան, ապա հասկանալի կլինի, թե ինչո՞ւ ընտրվեց հենց «Հեյդարով թիրախը»:



Այսպես, վերջին օրերին հարեւան երկրում նկատվող պաշտոնանկությունների շղթան գրեթե ամբողջությամբ Հեյդարովի մերձավորների անուններից է կազմված, մինչդեռ Քեմալեդին Հեյդարովի հայրը՝ Ֆաթահը, Հեյդար Ալիեւի մերձավորագույն մարդկանցից մեկն էր: Որդի Հեյդարովն էլ ժամանակին եղել է Ադրբեջանի ազգային մաքսային կոմիտեի ղեկավարը, իսկ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնը թերեւս «ընտրել» է երկրի ուժային ոլորտին որոշակիորեն տիրապետելու ցանկությամբ:

Արդարության համար նկատենք, որ Հեյդարովն իրավամբ Ադրբեջանում ամենակաշառակեր պաշտոնյայի համարումն ունի, նրան հարեւան երկրում ոչ պաշտոնապես անվանում են անգամ «արտակարգ նախարար»:

Ըստ պետքարտուղարություն ուղարկված Բաքվում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչի գաղտնի նամակի, որը հայտնի են դարձրել Ասանժն ու ընկերները, դիվանագետին, երբ հանդիպել է Հեյդարովին, ապշեցրել են նրա կուրծքը զարդարող թանկարժեք մետաղներն ու զարդերը. «Դրանք կարող էին մրցակցել ԱՄՆ զինված ուժերի միավորված կոմիտեի նախագահի մեդալների հետ», սարկազմով նկատել էր ամերիկացի դիվանագետը:

Մենք չենք մանրամասնի, թե հատկապես ո՞ր ոլորտներն են Ադրբեջանում համարվում Հեյդարովի ընտանիքի մենաշնորհը, պարզապես նշենք, որ, հաշվի առնելով մանավանդ վարչապետ Արթուր Ռասիզադեի տարեց լինելը, Ադրբեջանում հենց 35-ամյա Հեյդարովին են համարում երկրի «տնտեսական կառավարիչը», երբ երկրի բանկային ամբողջ համակարգը վերահսկում են Փաշաեւները:

Ինչ խոսք, այս հանգամանքը դարձել է Իլհամ Ալիեւի համար լուրջ գլխացավանք, իսկ Փաշաեւներին, ինչպես արդեն նշեցինք, Ալիեւը «ձեռք տալ» չի կարող: Մյուս կողմից էլ Ադրբեջանի նախագահը չի կարող այդպես հեշտորեն տապալել հոր մերձավորագույն ընկերներից մեկի ընտանիքը ու հենց այդ պատճառով Ալիեւը այդ պարտականությունը գցել է իր աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիեւի վրա, որին իր հերթին Ադրբեջանում անվանում են երկրի «քաղաքական գլխավոր խորհրդատու»: Ինչ խոսք, «հակահեյդարովյան» եւ ոչ թե հակակոռուպցիոն պայքարը ձեռնտու է նաեւ Մեհտիեւին անձամբ, քանի որ ինչպես Հեյդարովը, այնպես էլ Մեհտիեւը իրենց են համարում Ադրբեջանի «երկրորդ մարդը», իհարկե՝ Իլհամ Ալիեւից հետո:

Իսկ մինչ երկրում մի ընտանիքը պայքարում է մեկ այլ ընտանիքի դեմ՝ Ադրբեջանի «անմեղ նախագահը» ակտիվորեն այցելում է երկրի շրջանները, որոշում ընդունում «հարկադիր տեղահանվածների կենսապայմանները բարելավելու մասին», բացում կահույքի զույգ գործարաններ՝ յուրաքանչյուրը 500-ական աշխատատեղերով, ըստ ադրբեջանական աղբյուրների, «ժողովուրդն ամենուր ջերմորեն է դիմավորում նախագահ Ալիեւին, որն իրենց համար աշխատատեղեր է բացում», ինչպես ասում են՝ Ադրբեջանում հակակոռուպցիոն պայքարն ընթանում է ամբողջ թափով:

Մնում է միայն պարզել, թե կա՞ կապ արդյոք հարեւան երկրում այս «ընտանեկան բախումների» եւ այդ երկրում իսրայելա-ամերիկա-բրիտանական անհանգստությունների միջեւ, չէ՞ որ այս բախումների յուրաքանչյուր հանգուցալուծում, կողմերից որեւէ մեկի պարտություն Ադրբեջանում իրավամբ կբերեն ահաբեկչությունների ալիքի հավանականություն:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Լիբիացի դիվանագետները դատապարտում են «բռնակալ» Քադդաֆիի վայրագությունը



Լիբիայում բողոքի ցույցերը համաժողովրդական բնույթ են ստացել: Ցուցարարների կողմն անցած օդուժի փոխգնդապետ Քասըմ Նաջաան «Ալ Ջազիրա» հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել է, որ լիբիական բանակի հատուկ ստորաբաժանումները եւ աֆրիկացի վարձկանները մայրաքաղաք Տրիպոլիի թաղամասերում գնդացիրներից կրակ են բացում բնակչության վրա: Լիբիայի ղեկավար, գնդապետ Մուամմար Քադդաֆին հրամայել է մահապատժի ենթարկել այն օդաչուներին, որոնք հրաժարվում են ռմբակոծել ցուցարարներին եւ նրանց միացած զինվորականներին:

Նաջաայի խոսքերով, սպաների շարքերում արդեն կատարվել են բազմաթիվ ձերբակալություններ:

«Ալ Արաբիա» հեռուստաընկերության տվյալներով, ռազմօդանավերը փորձում են կանգնեցնել արեւելյան նահանգներից դեպի Տրիպոլի շարժվող ցուցարարներին: «Ալ Ջազիրան» հաղորդում է, որ ժողովրդական ելույթների ճնշման հետեւանքով Թաջուրում, Ֆաշլումում եւ Սուկ ալ Ջումայում կան բազմաթիվ զոհեր: Միջազգային կազմակերպությունների տվյալներով, դեռ երեկվա ռմբակոծություններից առաջ Տրիպոլիում սպանվել էր 500 մարդ, վիրավորների թիվը հասնում է 4 հազարի: Հաագայի միջազգային դատարանի տվյալներով, սպանվածների թիվը երեկ հասել է 600-ի:

Փետրվարի 15-ից անցկացվող ցույցերի մասնակիցները պահանջում են երկիրը 42 տարի կառավարող Մուամմար Քադդաֆիի հրաժարականը: Իշխանությունները դաժանորեն ճնշում են ցույցերը:

Նման պայմաններում լիբիացի մի շարք դիվանագետներ հանդես են եկել իրենց երկրի վարչակարգը դատապարտող կտրուկ հայտարարություններով: ՄԱԿ-ում Լիբիայի պատվիրակության անդամները երեկ անցել են ընդդիմության կողմը: Պատվիրակության ղեկավարի տեղակալ Իբրահիմ Դաբաշին իշխանությունների գործողությունները անվանել է «ցեղասպանություն» եւ «հակամարդկային ոճրագործություն»: Նրա խոսքերով, Քադդաֆին պետք է կանչվի միջազգային դատարան: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Լիբիացի դիվանագետների նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկում է Լիբիայում տեղի ունեցող արյունահեղության հարցը:

Մալայզիայում Լիբիայի դեսպանությունը խստիվ դատապարտել է իշխանությունների գործողությունները, «անընդունելի» համարելով խաղաղ քաղաքացիների զանգվածային սպանությունը:

Ավելի վաղ Արաբական պետությունների լիգայում եւ Հնդկաստանում Լիբիայի դեսպանները հրաժարական էին տվել եւ միացել ընդդիմությանը: Հրաժարական է տվել նաեւ Լիբիայի արդարադատության նախարարը:

Ինքը՝ Քադդաֆին, երեկ վաղ առավոտյան կեսօրից առաջ հեռուստատեսությամբ հայտարարել է, որ ինքը դեռ Լիբիայում է:

Իտալական «Կոռիերե դելլա սերա» թերթի բնորոշման համաձայն, Քադդաֆին «լիամասշտաբ եւ անխնա պատերազմ» է հայտարարել սեփական ժողովրդին եւ դրանով իսկ տարբեր ցեղերի մարդկանց ստիպել է միավորվել:

# «Լիբիան չենք թողնելու իտալացիներին կամ թուրքերին»

*1-ին էջից*

**Այլ կերպ, հետզհետե արյունահեղ բնույթ ստացող զինված բախումների հետեւանքով Լիբիայում իրավիճակը օրհասական է դառնում: Դրա հետ հետզհետե անելանելի վիճակում են հայտնվում Լիբիայում շինարարական աշխատանքներ կատարող թուրքական ընկերություններն ու այնտեղ աշխատող թուրքերը, որոնց թիվը ավելի քան 24 հազար է: Ընդ որում ընկերությունների շինհրապարակներն ու աշխատողները սփռված են երկրով մեկ: Ականատեսների վկայությամբ, Լիբիայում անխնա կողոպտում են թուրքական ընկերությունները, նրանց պահեստները, նաեւ կացարաններով հանդերձ՝ թուրք աշխատողներին:**

**Խնդիրը, սակայն, սոսկ կողոպուտը չէ, այլ ձերբակալություններն եւ տարհանման դժվարությունները: Թուրքական թերթերի վկայությամբ, 1500 թուրք մեկուսացվել է Լիբիայում համակենտրոնացման ճամբարի վերածված մարզադաշտում: Մնացածները՝ շուրջ 500 մարդ՝ Բենգազիից 500 կմ հեռավորության վրա գտնվող Ջալո քաղաքի, 170-ը՝ Դերնեի, 700-ը՝ Թունիսին սահմանամերձ Զուհարայի Ալ Ասսա գյուղի մոտակայքի շինհրապարակներում՝ արգելափակված: Քանի որ կողոպտված են նաեւ ընկերությունների տրանսպորտի միջոցները, ուստի նրանք ոչ էլ կարողանում են փախչել: Մինչդեռ նրանք Լիբիայից հեռանալու համար գոնե պետք է հասնեն Բենգազի: Թեեւ Լիբիայի իշխանությունների վայրէջքի թույլտվություն չեն տվել թուրքական ինքնաթիռներին, սակայն Բենգազին միաժամանակ նավահանգիստ է:**

**Առ այսօր, փոխվարչապետ Ջեմիլ Չիչեքի վկայությամբ, Լիբիայից տարհանվել է 1083 թուրք: Կիաջողվի՞ մնացածների անվտանգ տարհանումը վարչապետ Էրդողանի կառավարությանը, հասկապես Լիբիայի հարավային շրջաններից, ցույց կտա ժամանակը: Համենայն դեպս փետրվարի 21-ին նախարարների խորհրդի նիստում այդ հարցը շուրջ 5 ժամ քննարկվել եւ երկար տատանումներից հետո թուրքական կառավարությունը որոշել էր երկու լաստանավ ուղարկել Լիբիա: Երեկ այդ լաստանավերը երեք ռազմանավերի ուղեկցությամբ տեղ հասած պետք է լինեին:**

**Եթե թուրքական կառավարությունը քաղաքացիների համար նախատեսված լաստանավերը ուղարկում է ռազմանավերի ուղեկցությամբ, կնշանակի խնդրահարույց է Լիբիայում արգելափակված քաղաքացիների տարհանումը, ընդ որում ոչ միայն զինված բախումների կամ երկրում տիրող քաոսի, այլեւ թուրքերի նկատմամբ Լիբիայի իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքի պատճառով:**

**Իշխանությունների պարագայում խոսքը Լիբիայի առաջնորդի կրտսեր որդու՝ Սեյֆուլիսլամ Քադդաֆիի մասին է: Նա, Ռոյթերի վկայությամբ, փետրվարի 20-ի ուշ երեկոյան ունեցած հեռուստաելույթում երկրում ծայր առած խռովության համար պատասխանատու է ճանաչել օտարերկրյա ուժերին, ապա սպառնացել է ցուցարարներին եւ ասել. «Սա Լիբիայի տարածքային ամբողջականությունը վտանգի տակ դնող անջատողական շարժում է... Մենք մեր զենքը վերցնելու եւ կռվելու ենք մինչեւ արյան վերջին կաթիլը... Լիբիան չենք թողնելու իտալացիներին կամ թուրքերին... Ոչնչացնելու ենք բոլոր այն օտարածին տարրերին, որոնք խռովություն են հրահրել մեր երկրում»:**

**Հաջորդ օրը Քադդաֆիի որդուն լրացրել են Լիբիայի պաշտոնական լրատվամիջոցները: Նրանք ընդգծել են, որ երկրի տարբեր շրջաններում առաջացած քաոսային իրավիճակը պայմանավորված է մահմեդական այն երկրներից Լիբիա ներթափանցած կազմակերպությունների գործունեությամբ, որոնք ծառայում են «սիոնիստական ուժերին»: Այս լրատվամիջոցներին հավելել են «Ջանան նյուզ», «Ալ Ֆաջրի» եւ «Էլ Շամս» թերթերը, տեղեկացնելով անվտանգության ուժերի կատարած ձերբակալությունների մասին՝ ձերբակալված թունիսցիների, եգիպտացիների, սիրիացիների, պաղեստինցիների թվում նշել են նաեւ թուրքերի անունը: Նրանք այնուհետեւ ավելացրել են. «Ձերբակալվածներին, որոնք մինչ այդ սադրիչ գործողություններ էին ծավալում Թունիսում, Մարոկկոյում, Իրանում, Սուդանում եւ Եգիպտոսում, ուղղորդում է Իսրայելը ի դեմս բանակի հետախուզության նախկին պետ Ամոս Յադլինի»:**

**Փետրվարի 21-ին Թուրքիայի ղեկավարությունը արձագանքեց մեղադրանքներին: Մինչ ներքին եւ արտաքին գործերի նախարարները կրտսեր Քադդաֆու թուրքերին հասցեագրած մեղադրանքները վերագրում էին լեզվի սայթաքման, նախագահ Աբդուլա Գյուլը, նկատի ունենալով երկրում խռովություն հրահրելու համար Լիբիայում ձերբակալված թուրքերին, ասաց. «Թուրքերն այսպիսի բան չեն անի»:**

**Թուրքերին չգիտենք, բայց որ Եգիպտոսի նախագահ Մուբարաքին հղած «ժողովրդի պահանջներին ընդառաջ գնալու եւ հրաժարական տալու» ուղերձով վարչապետ Էրդողանը վիրավորել ու զայրացրել է արաբական աշխարհի առաջնորդներին, կասկած չի հարուցում:**



# Երկրաշարժ Նոր Զելանդիայում



**Նոր Զելանդիայի Քրայստչերչ քաղաքում երեկ տեղական ժամանակով ժամը 13-ին տեղի է ունեցել 6,3 մագնիտուդով երկրաշարժ: Վարչապետ Ջոն Քեյը Ֆրանսպրեսի թղթակցին ասել է, որ զոհվել է առնվազն 65 մարդ: Խոսքը նախնական տվյալների մասին է, քանի որ փլատակներում մնում են հարյուրավոր մարդիկ:**

**Էպիկենտրոնը Քրայստչերչից 5 կմ հեռավորության վրա է: Առաջին ցնցմանը հաջորդել է 5,7 մագնիտուդով երկրորդ ցնցումը:**

**Քաղաքում էլեկտրականությունից զրկվել են հազարավոր մարդիկ, ընդհատումներով է գործում բջջային կապը, ավտոտրանսպորտի եւ երկաթուղու աշխատանքը փաստորեն կազմալուծված է: Վնասված է քաղաքի օդանավակայանի դիսպետչերական աշտարակը, թռիչքները ընդհատված են: Քաղաքում արտակարգ դրություն է հաստատված:**

**2010-ի սեպտեմբերին Քրայստչերչից 30 կմ արեւմուտք տեղի է ունեցել 7,2 մագնիտուդով երկրաշարժ: Այն ժամանակ վնասվել էին հաղորդակցություններ եւ տասնյակ շենքեր, լուրջ խեղումներ էր ստացել երկու մարդ:**

# Լեհաստանի արտգործնախարարը ընդունեց ջախջախված «Տու-154»-ի օդաչուների սխալը



**Լեհաստանի արտգործնախարար Ռադոսլավ Սիկորսկին հայտարարել է, որ 2010-ի ապրիլի 10-ին Սմոլենսկի մոտ ջախջախված լեհական «Տու-154»-ի անձնակազմը սխալ է թույլ տվել: Այդ հայտարարությունը Սիկորսկին արել է TVN24 հեռուստաալիքի եթերում:**

**«Լեհ օդաչուները ակնհայտ սխալ են թույլ տվել: Նրանք չպետք է վայրէջք կատարեին մառախուղի պայմաններում», ասել է նախարարը, որի խոսքերը մեջբերում է ՌԻԱ գործակալությունը:**

**Սիկորսկին նաեւ մեկնաբանել է ընդդիմության առաջնորդ Յարոսլավ Կաչինսկու՝ զոհված նախագահի եղբոր այն խոսքերը, թե օդաչուի սխալին վերաբերող հաղորդումները վիրավորական են Լեհաստանի քաղաքացիների համար: Արտգործնախարարի կարծիքով, օդաչուների սխալին վերաբերող պնդումները «չեն վնասում Լեհաստանի վարկին»:**

**Նախարարը նաեւ ընդգծել է, որ Ռուսաստանն ու Լեհաստանը «Տու-154»-ի աղետը հետաքննելիս պետք է ղեկավարվեն ընդհանուր շահերով, այն է՝ թռիչքների անվտանգությունն ապահովելու ձգտմամբ: Նրա խոսքերով, ռուսաստանցիները պետք է երախտապարտ լինեն, եթե Լեհաստանը ցույց տա դիսպետչերների աշխատանքի ճշգրտման անհրաժեշտությունը:**

**2010-ի ապրիլի 10-ին Կատինի սգո միջոցառումներին մասնակցելու մեկնած նախագահ Լեխ Կաչինսկու եւ լեհական պատվիրակության «Տու-154»-ը Սմոլենսկի մարզում կործանվել էր վայրէջքի անհաջող փորձի ժամանակ: Բոլոր ուղեւորները եւ անձնակազմը զոհվել էին (96 մարդ): 2011-ի հունվարի 12-ին Միջպետական ավիացիոն կոմիտեն աղետի վերաբերյալ հրապարակած զեկուցագրում նշել էր, որ միջադեպի համար ամբողջ մեղքն ընկնում է նախագահական օդանավի անձնակազմի վրա:**

# Բահրեյնում շիա բանտարկյալներն ազատ են արձակվել

Բահրեյնի միապետ, շեյխ Համադ բեն Իսա ալ Խալիֆան հրամայել է բանտերից ազատ արձակել շիա կալանավորներին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով երկրի պետական լրատվական գործակալությանը: Բանտարկյալների արձակումը շիա ընդդիմության բողոքի ցույցերի մասնակիցների պահանջներից մեկն էր:

Երկրում մեծամասնություն կազմող շիաները պահանջում են նաեւ սահմանադրական բարեփոխման անցկացում եւ վարչապետի ընտրովի պաշտոնի ստեղծում: Ներկայումս Բահրեյնում միապետն է նշանակում վարչապետին եւ խորհրդարանի վերին պալատի անդամներին: Իշխանությունը պատկանում է փոքրամասնություն կազմող սուննիներին, որոնցից է նաեւ թագավորական ընտանիքը:

Միապետը շաբաթավերջին գահաժառանգ շեյխ Սալման բին Համադ ալ Խալիֆային հանձնարարեց բանակցել «երկրի անխտիր բոլոր քաղաքական ուժերի հետ»: Գահաժառանգ շեյխի կարգադրությամբ մայրաքաղաք Մանամայի փողոցներից դուրս բերվեցին զինվորական ստորաբաժանումները: Մայրաքաղաքում կարգուկանոնին հետեւելու են միայն ոստիկանները:

Բահրեյնում բողոքի ցույցերը սկսվել էին փետրվարի 14-ին: Ցուցարարների եւ կառավարական ուժերի բախումների հետեւանքով կան 4 սպանված եւ 300 վիրավոր:

# «Երեւի թե «վահրամյան սինդրոմ»



Վերջին օրերին հայաստանյան լրատվամիջոցների ու սոցիալական կայքերի համար Վահրամ Պետրոսյանն իսկական «գանձ» դարձավ: Երիտասարդը մեր շոուբիզնեսի «աստղերի» համար երգեր է գրում, բայց նրա մասին ո՛չ լսել էինք, ո՛չ էլ պատկերացում ունեինք: Անցյալ շաբաթ, երբ ասուլիսի ժամանակ Վահրամ Պետրոսյանը խոստովանեց, որ սիրում է ադրբեջանական երաժշտություն, ու դա իր էության մեջ է, անմիջապես հայտնվեց ուշադրության կենտրոնում: Նա նաեւ նշել էր, որ ճաշակ բարձրացնելու խնդիր չունի. «Ես փող եմ աշխատում ու լավ էլ ապրում եմ, իսկ ազգի ճաշակը բարձրացնելու նպատակ չունեմ: Շատ եմ ուզում, որ մեր երգերի մեջ լինեն թուրքական էլեմենտներ»: Սրան **«Ազգը»** անդրադարձել է փետրվարի 18-ի համարում: Վերոնշյալ հայտարարություններից հետո Վահրամ Պետրոսյանը դարձավ հակահերոս, որը վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության ու արժանապատվության համար: Տեսնենք էլ ովքե՞ր ու դեռ ինչքա՞ն պետք է քարկոծեն Վահրամին՝ մոռանալով, որ այդպես հակահերոսին հերոս են դարձնում: Նախ նրան սկսեցին երգահան անվանել, այնինչ նա մղոններով հեռու է երգահան լինելուց, նրա խոսքերը դարձան քննարկման թեմա տանը, աշխատավայրում, սոցիալական կայքերում՝ բանավեճեր, մեղադրանքներ եւ այլն: Արդեն երիտասարդ տարիքում Վահրամ Պետրոսյանն ապրեց իր «աստղային ժամը»: Մեզանում Վահրամը միակը չէ, որը սիրում է թուրքական ու արաբական երաժշտություն, բայց թե ի՞նչը դրդեց նրան հրապարակավ հայտարարել, որ թուրքական էլեմենտներ է պետք մտցնել մեր երաժշտության մեջ, դա արդեն այլ հարց է: Ինչեւէ, Ժողովուրդն, իսկապես, ճիշտ է ասում՝ մի հիմար քարը գցում է հորը, հետո 100 խելոք մարդ չեն կարողանում հանել:

Թեմային երեկ «Դե ֆակտո» ակումբում անդրադարձավ նաեւ Կոմպոզիտորների միության նախագահ **Ռոբերտ Ամիրխանյանը**. «Երեւի թե սա կոչվում է «վահրամյան սինդրոմ» մեր հասարակության մեջ»: Մաեստրոն ընդգծեց, որ Վահրամ Պետրոսյանը հավանաբար չի էլ պատկերացնում թե ո՞րն է ադրբեջանական երաժշտությունը, ու դրա ո՞ր ճյուղն է իրեն չափազանց շատ հետաքրքրում: Երիտասարդի հայտարարությունների վերաբերյալ Ռ. Ամիրխանյանը նշեց. «Որեւէ կոմպոզիտոր նման հայտարարություն անել չէր կարող, քանի որ կոմպոզիտորը հրաշալի պատկերացնում է, թե որն է հայ երաժշտությունն ու որոնք են նրա խնդիրները»: Իսկ Վահրամի հարցադրումը, մաեստրոյի կարծիքով, ընդամենը միամտություն է ու անտեղյակություն. «Այդպիսի կոմպոզիտորներ մեր շարքերում չունենք: Երիտասարդը հավանաբար զբաղվում է մեր հացը դարձած երգարվեստի գործերով, մտած է բիզնեսի մեջ ու կողմնորոշված է դեպի շուկայի կողմը»: Իսկ ինչ ստեղծվում է շուկայի ու վաճառքի համար, ներառում է այնպիսի գեղգեղանքներ, որոնք բնորոշ են մահմեդական երաժշտական մշակույթին: Մաեստրոն հավելեց, որ մեր շուկան ողողված է անճաշակ, անդեմ, մտքին, հոգուն ու սրտին ոչինչ չասող երաժշտական ու տեքստային սուռոգատներով, որոնք որեւէ կապ չունեն մեր ազգային նկարագրի հետ: Վահրամի հայտարարություններն այսօր առաջ են բերել շատերի զայրույթն ու աղմուկ ստեղծել Վահրամի շուրջը, իսկ ինչո՞ւ նման արձագանքներ չեղան այն ժամանակ, երբ Անդրեն «Եվրոտեսիլ» երգի մրցույթում ներկայացրեց այնպիսի երգ, որի մեջ առկա էին թուրքական կենցաղային երաժշտության մոտիվներ. «Օգտագործելով նման տարրեր՝ մենք ջուր լցրեցինք նրանց ջրաղացին: Անդրեի ելույթի հաջորդ օրը Գերմանիայից ինձ զանգեց մեր հայ երաժիշտներից մեկն ու ասաց՝ էս ի՞նչ արեցիք»: Լսելով Անդրեի կատարած երգը՝ Գերմանիայում հայ երաժշտին թուրք հարեւանը հետեւյալն է ասել. «Տեսնո՞ւմ եք՝ դուք ինքնուրույն երաժշտություն չունեք, դրա համար էլ մեր երաժշտական նյութից եք օգտվում»: Կան նաեւ այսպիսի պատմություններ, որոնց շուրջը, սակայն, աղմուկ չի բարձրացվում, մինչդեռ մաեստրոն շատ տեղին նշեց, որ երգիչը հավասար է դեսպանի: Այնուհետեւ անդրադարձավ «Շանթ» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «X-Factor» երաժշտական նախագծին, որտեղ, մաեստրոյի կարծիքով, ելույթ են ունենում այնպիսի երիտասարդներ, որոնք չպետք է երգեն: «Նրանք արդեն ապրանք են դարձել: Ղեկավարները չեն ուղղում նրանց: Հնչում են միայն գովեստի խոսքեր: Երիտասարդը երգում է սխալ, ու երբ նրան պետք է ասեն՝ դու սխալ ես, ասում են հակառակը՝ դու հրաշալի ես երգում», հավելեց բանախոսը եւ ընդգծեց, որ դա իր մասնագիտական կարծիքն է:

Առհասարակ, ներկայիս անճաշակության մթնոլորտը կարգի բերելու մեջ կարեւոր է նաեւ մշակույթի նախարարության դերը: Ռոբերտ Ամիրխանյանը նշեց, որ նախարարությունը պետք է վարի մշակույթի քաղաքականություն, ինչը չունի մեր նախարարությունը՝ փոխարենն ունի միայն միջոցառումների ցանկ: Վերջում բանախոսը շատ ընդհանրական ներկայացրեց այօրվա մշակույթի վիճակը. «Մենք գտնվում ենք մշակութային անկման ապարեզում, ինչը խոստովանելը շատ դժվար է»: Այսպիսի պայմաններում Վահրամ Պետրոսյանի ամպագոռգոռ հայտարարությունները միանգամայն սպասելի էին: Իսկ ինչքան մարդիկ կան, որ լսում են արաբական ու թուրքական երաժշտություն, նայում պորտապար, բայց միաժամանակ փնովում Վահրամին: Նրա հայտարարությունները իրապես արժանի են ե՛ւ արհամարհանքի, ե՛ւ քննադատության, բայց մեղադրելն ու քննադատելը, ցավոք, ամենահեշտ տարբերակներն են: Հարկավոր է կենտրոնանալ ոչ թե մի անձի, այլ հասարակության մտքի ու ճաշակի վրա, այն հասարակության, որի վառ պատկերը հենց Վահրամ Պետրոսյանն է:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Բարեկամություն» համույթը բացեց հոբելյանական համերգաշրջանը



Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթը 24-րդ համերգաշրջանը, որը բացվեց փետրվարի 19-ին Արամ Խաչատրյան համերգասրահում, նվիրված էր համույթի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր բալետմայստեր, ՀՀ ժող. արտիստ, «Մովսես Խորենացի» մեդալակիր Նորայր Մեհրաբյանի ծննդյան 70-ամյակին: Համույթը կրկին փայլեց իր կատարողական որակով, ճկուն ու պլաստիկ շարժումներով, որոնցում հստակ ուրվագծվում էին սիրված վարպետի, հանրաճանաչ բալետմայստեր Նորայր Մեհրաբյանի ձեռագիրն ու մանրակրկիտ աշխատանքը սիրված գործին՝ պարարվեստին:

Հոբելյանական տարվա առաջին համերգին ներկայացվեցին հայկական պարերի նոր մշակումներ «Էշխեմեդ» (Սայաթ-Նովա), «Կռունկ» (Կոմիտաս), «Վերջին հանդիպում» (Ալան Հովհաննես-Արշիլ Գորկի), «Գառուն» (Տ. Մանսուրյան) եւ այլն, ինչպես նաեւ աշխարհի ժողովուրդների ֆոլկլորից նմուշներ, դասական շատ ստեղծագործությունների յուրովի ու նոր մեկնաբանություններով համարներ, որոնք կազմել են անսամբլի ծրագրի հիմքը:

Յուրաքանչյուր ստեղծագործությանը պրոֆեսիոնալ մոտեցումը, քրտնաջան աշխատանքն ի հայտ էր գալիս իրար հաջորդող երկու տասնյակ համարները ներկայացնելիս ու ընդգծվում էր սերը դեպի պարարվեստը, որն էլ անսամբլի հաջողության գրավականն էր: Իսկ պարային հագուստների շքեղ ու գունագեղ հանդեսը, ճաշակով, ազգային ոճն ու էլեմենտները ընդգծված էին անսամբլի ստեղծման առաջին օրվանից շուրջ 24 տարի Նորայր Մեհրաբյանի կողքին աշխատող ու ստեղծագործող նկարչուհի Ռուբինե Հովհաննիսյանի երանգներով ու բարձր ճաշակով արված էսքիզների հիման վրա եւ հիացնում էին հանդիսատեսին: Իսկ մենապարողներ Սոնա Հակոբյանը, Շուշանիկ Բաբայանը, Անժելիկա Դավթյանը, Մոնիկա Գաբրիելյանը, Կարեն Մակինյանը, Աննա Կլեկչյանը, Անուշ Ղազարյանը, Արման Ջուլհակյանը, Լուսինե Սարգսյանը, Աննա Բաղդասարյանը հրաշալի ներկայացրին ժողովրդական, դասական ստեղծագործությունների հիման վրա բեմադրած խորեոգրաֆիկ լուծումներով փայլուն համարներ՝ արժանանալով երկարատեւ ծափողջույնների: Առաջին հոբելյանական համերգը նվիրված սիրված բալետմայստերին անցավ բարձր մակարդակով ու ընդունվեց ջերմորեն:

«**Ազգն**» առաջիկայում կանդրադառնա Նորայր Մեհրաբյանի ստեղծագործական կեսդարյա ուղուն ու նրա նպատակներին եւ երազանքներին, որոնցից շատերը արդեն իրականացել են ու փայլուն հաջողություններ գրանցել: Շնորհավորում ենք Նորայր Մեհրաբյանին ու անսամբլի ողջ կազմին, մաղթում նորանոր բեմեր ու հաջողություններ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ



ԳՈՒՅԺ

# Դավիթ Բեջանյան

Կյանքից հեռացավ Դավիթ Բեջանյանը: Հեռացավ արվեստի մարդը, երեւանցիների սիրելին, նշանավոր քանդակագործն ու մեծ քաղաքացին: Նա կյանքից հեռացավ այնպիսին, ինչպիսին ծնվել էր. փխրուն ու անպաշտպան, անսահման բարի ու անկեղծ, տաղանդավոր ու համեստ:

Մեր քաղաքի պատմության մեջ Դավիթ Բեջանյանը մեծարժեք երեւույթ էր. ստեղծագործական հանդուգն մտածողություն, զգացմունքների ոգեշնչված թռիչք, զարմանալի բազմակողմանիություն եւ միաժամանակ էության ներդաշնակ ամբողջականություն:

Լինելով երաժշտական եւ գեղարվեստական կրթությամբ իսկական մտավորական՝ նա տարբերվում էր եզակի տարածական երեւակայությամբ եւ պլաստիկայի նրբագույն զգացողությամբ: Նրա աշխատանքներն ըստ արժանվույն ներկայացված են Ռուսաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում:

Բնության կողմից շռայլորեն օժտված՝ նա բազմաթիվ տարիներ նվիրել է երաժշտությանը, բայց նրա հոգու իրական թրթիռն ու համակվածությունն ի հայտ էին գալիս, երբ նա կերտում էր իր քանդակները: Երաժշտական «բացիլը», որը մոլեգնում էր նրա մեջ, դրսեւորվեց Ավետ Տերտերյանի նշանավոր դիմապատկերը կերտելիս: Իսկ նրա վերջին աշխատանքը՝ Առնո Բաբաջանյանի արձանը Երեւանում, համարձակ կարելի է դասել մեր ազգային արվեստի ականավոր ձեռքբերումների թվին:

*(ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆԻՑ)*

# Ի պատասխան դիլետանտության

Վերջերս պարբերաբար տեղի ունեցող փառատոները որոշակի աշխուժացում մտցրին հայ թատերական կյանքում: Ուրախալի փաստ էր նաեւ 2010 թ. լույս ընծայված Գագիկ-Սարգիս Կարապետյանի «Զինվոր» պիեսների ժողովածուն, որը հեղինակի երկրորդ գիրքն է: Այստեղ զետեղված յոթ պիեսներն անդրադառնում են այսօրվա հայ իրականությանը հուզող տարբեր խնդիրներին: Կարեւոր փաստ է նաեւ, որ գրքում անդրադարձ է կատարվել Արցախյան հերոսամարտին: «Զինվորը» պիեսը մարդկային ոգու հաղթանակի եւ հիասթափության սինթեզն է: Անձամբ ներկա լինելով ընթերցողների (հիմնականում՝ ազատամարտիկներ) հուզական դրսեւորումներին՝ կարծում եմ ստեղծագործությունը ծառայել է իր նպատակին: Միաժամանակ ուզում եմ նշել, որ պիեսն ունի կուռ կառուցվածք:

Սակայն առկա է տխրեցուցիչ մի հանգամանք: Այսօր Հայաստանում տպագրված որեւէ գիրք պատշաճ ուշադրության չի արժանանում ո՛չ կառավարության, ո՛չ ընթերցողի կողմից: Գրողին մնում է պարփակվել ու շարունակել անհուսորեն գրել, եւ դա է թերեւս պայքարի միակ ուղին, իսկ հաղթանակը՝ արարված ստեղծագործությունն է: Ամեն դեպքում այսպիսի ոչ բարենպաստ պայմաններում ստեղծագործողների համար կա եւս մի բացասական երեւույթ՝ սիրողական քննադատությունը, որը ոչ միայն չի կարող նպաստել գրականության զարգացմանը, այլեւ թյուր տպավորություն է ստեղծում առանց այդ էլ սակավաթիվ ընթերցողների շրջանում: Տիգրան Մարտիրոսյանի քննադատական հոդվածը իր ամպագոռգոռ վերնագրով «Արվեստը սեռական նկրտումների մկրտարան չէ» («**Ազգ**») վերը նշածիս վառ ապացույցն է: Պարզապես կցանկանայի նշել, որ դեռեւս Հին Հունաստանում կային բազում վեճեր արվեստի հասկացության, առաջացման եւ զարգացման տենդենցների շուրջ: Այսպես՝ Արիստոտելն իր «Պոետիկա» աշխատությունում բազմակիորեն քննարկելով արվեստի հարցերը, այնուամենայնիվ որեւէ վերջնական կամ պարտադրող սահմանում չի տալիս: «Ի՞նչ է արվեստը» կամ «Ի՞նչ է հարկավոր արվեստին» հարցադրումները մինչ այժմ չեն ստացել իրենց վերջնական պատասխանները եւ երբեւիցե չեն էլ ստանա եւ դրանում է թերեւս ամբողջ հմայքը: Ուստի հարկավոր է զերծ մնալ արվեստի որեւէ մակերեսային ձեւակերպումից, նույնիսկ եթե առաջին հայացքից կարող է գրավել ընթերցողի ուշադրությունը: Մի քանի թռուցիկ անդրադարձումով խեղվել է արդի հայ պոեզիայի եւ արձակի համայնապատկերը՝ այնուամենայնիվ չնշելով որեւէ կոնկրետ հեղինակի կամ որեւէ ստեղծագործության անուն: Ինչեւիցե, մի կողմ թողնելով այս ամենը, անդրադառնամ դրամատուրգիային: Ինչպես ամբողջ հոդվածում, այնպես էլ «Զինվոր» պիեսների ժողովածուի քննադատությանը վերաբերող հատվածում անզեն աչքով կարելի է նկատել, որ ոչ մի էական գրականագիտական հարցադրում արված չէ: Պարզաբանեմ, մասնավորապես չի խոսվում հեղինակի լեզվամտածողության, պիեսների կառուցվածքի, հերոսների հոգեբանական զարգացման, վերջաբանի ուժգնության կամ համոզիչ լինելու մասին: Եթե վերը նշված հարցադրումները չեն արժանացել որեւէ ուշադրության, ապա ինչպե՞ս կարելի է հոդվածը համարել հաջողված, այն դեպքում, երբ յոթ պիեսներից որպես թերություն ընդամենը նշվում է «Միայնակ լիալուսին» պիեսի ռեմարկի բացակայությունը: Այս հոդվածի տեքստային տարածքը լցված է մանկամիտ զարմանքով, որն հեղինակին պատել է տեղ-տեղ հանդիպող բաց տեսարանների նկարագրությունը կարդալիս: Իհարկե, արվեստն ունի զարմացնելու, նույնիսկ բարկացնելու հակում, սակայն իրական վերլուծաբանը պետք է կոփված լինի եւ ամեն ինչ ենթարկի վերլուծության ու վերջինիցս էլ բխեցնի եզրակացությունը: Այս ամենը հետեւությամբ հնարավոր է ի կատար ածել, եթե հոդվածագիրը չունենա կայացման խնդիր, ու ամբողջ տեքստը չողողի միայն նմանատիպ տողերով: Որպես վերջաբան նա խորհուրդ է տալիս պաշտպանության նախարարությանը եւ պետական մարմիններին իրենց ուշադրությունը հրավիրել Գագիկ Կարապետյանի վրա, քանի որ նրա պիեսները կարող են «վնասել» հասարակությանը: Դա մոտավորապես նշանակում է, որ հեղինակին հարկավոր է ֆիզիկապես մեկուսացնել հասարակությունից, աքսորել, բանտարկել կամ ենթարկել տնային կալանքի:




Նմանատիպ բանսարկությունների շնորհիվ Չարենցյան ժամանակաշրջանի արվեստագետների մի ամբողջ սերունդ ֆիզիկապես ոչնչացվեց: Ուրախալի փաստ է, որ ապրում ենք ազատ ու անկախ երկրում, ինչը մեզ նվիրաբերեց Արցախյան հերոսամարտը, եւ այժմ այսպիսի հոդվածները չեն կարող որոշել գրողի ճակատագիրը:

Ես իսկապես խորհուրդ եմ տալիս ուշադրություն դարձնել այս գրքին, քանի որ ի թիվս այլ մտքերի, այստեղ կարելի է հանդիպել. «Ի հեճուկս նրա՝ ես ճանճասպան թուղթ չեմ լինի: Ես ինքս կդառնամ ճանճասպան մարդ»: («Ճանճասպան տղան»): Այս տողերը թողնում եմ յուրաքանչյուրիս վերլուծական մտքին:

Սա գիրք է ժամանակակից մարդու, նրան հուզող խնդիրների ու ձգտումների մասին: «Զինվոր» ժողովածուի հերոսների ուղին պայքարն է, եւ նույնիսկ պարտությունից հետո նրանք չեն դադարում պայքարել թե՛ որպես մարդ, թե՛ որպես քաղաքացի եւ թե՛ որպես մարտիկ:

Հուսով եմ, մոտ ապագայում այս պիեսները կբեմադրվեն, ու Գագիկ Կարապետյանը կունենա ոչ միայն հավատարիմ ընթերցող, այլեւ հանդիսատես:

ԼԻԼԻԹ
Արվեստաբան

# Մարզական

## Սլովենիայում հայ ըմբիշները չորս մեդալ նվաճեցին

Սլովենիայի Մուրսկա Սոբոտա քաղաքում անցկացված հունահռոմեական ոճի ըմբշամարտի Գրան պրիի խաղարկությունում հաջող մրցելույթներ ունեցան հայ ըմբիշները: Մրցագոտի դուրս եկած 5 հայ ըմբիշներից չորսը տուն վերադարձան մեդալներով:



Առավել հաջող հանդես եկան Ռոման Ամոյանը (55 կգ) եւ Արթուր Շահինյանը (84 կգ)՝ կանգնելով պատվո պատվանդանի վերին աստիճանին: Ռոման Ամոյանը հաջորդաբար հաղթեց ռուսաստանցի Անդրեյ Բուլեեւին, չեխ Յան Հոչկոյին, իսկ եզրափակչում պարտության մատնեց կորեացի Յունգ Բելկ Լեեին:

Արթուր Շահինյանն էլ 84 կգ քաշայինների մրցավեճում իր հավասարը չունեցավ՝ առավելության հասնելով բոլոր 4 մրցակիցների նկատմամբ: Նա պարտության մատնեց իտալացի Դենիս Նիսկոլաերին, սերբ Պետր Բալոյին, չեխ Վոյտեկ Կուկլային եւ ռուսաստանցի Ազամաս Բիկբաեւին:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրին Վահան Ջուհարյանն ու Սասուն Ղամբարյանը: Հաջող հանդես եկավ Ջուհարյանը՝ նվաճելով բրոնզե մեդալ: Նա հաջորդաբար հաղթելով ռուսաստանցի Իբրահիմ Լաբազանովին եւ ամերիկացի Մաթ Հոլթին, կիսաեզրափակչում պարտվեց ռուսաստանցի Ադամ Կուրակին: Վերջինս առաջին փուլում հաղթել էր նաեւ Սասուն Ղամբարյանին: Ի վերջո Կուրակը դարձավ մրցաշարի հաղթող, իսկ Ջուհարյանն ու Ղամբարյանն իրավունք ստացան պայքարելու բրոնզե մեդալի համար: Առաջին գոտեմարտում Սասունը հաղթեց սերբ Դավոր Ստեֆանեկին: Հաջորդ գոտեմարտում նա մրցեց իր հայրենակից Վահան Ջուհարյանի հետ: Հաջողությունն ուղեկցեց ավելի փորձառու Ջուհարյանին, որն էլ դարձավ բրոնզե մրցանակակիր: Իսկ Ղամբարյանը գրավեց 5-րդ տեղը:

Բրոնզե մեդալ ստացավ նաեւ Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ): Արսենը մրցաշարը սկսեց ամերիկացի Էնդի Բիսեկի նկատմամբ տոնած հաղթանակով: 2-րդ գոտեմարտում նա պարտվեց ապագա չեմպիոնին՝ կորեացի Կոնգ Նաե Կոոյին եւ իրավունք ստացավ պայքարելու բրոնզե պարգեւի համար: Չեխ Թոմաշ Սոբեցկու հետ գոտեմարտում հաջողության հասնելով, Արսեն Ջուլֆալակյանը դարձավ բրոնզե մեդալակիր:

## Մեկնարկը մարտի 5-ին

Սովորաբար Հայաստանում ֆուտբոլային մրցաշրջանը մեկնարկում էր գավաթային հանդիպումներով: Սակայն այս տարի մրցաշրջանը կմեկնարկի բարձրագույն խմբի առաջնությամբ, որի մեկնարկը կտրվի մարտի 5-ին կայանալիք «Արարատ»-«Բանանց», «Միկա»-«Շիրակ» հանդիպումներով: Հաջորդ օրը տեղի կունենան «Իմպուլս»-«Փյունիկ», «Գանձասար»-«Ուլիս» մրցախաղերը:




Եվ այսպես, 8 թիմեր 20-րդ անգամ կվիճարկեն հանրապետության չեմպիոնի տիտղոսը, որին բոլորից հաճախ՝ 13 անգամ արժանացել է «Փյունիկը»: Հիշեցնենք, որ 1992-ին կայացած Հայաստանի անդրանիկ առաջնությանը մասնակցել է 24 թիմ, իսկ այսօր հոբելյանական՝ 20-րդ մրցաշրջանին նախապատրաստվում են ընդամենը 8 ակումբներ: Առաջնությունը վերջնագիծը կհատի նոյեմբերի 5-ին: 2-րդ եւ 3-րդ շրջանների միջեւ մեկամսյա ընդմիջում է նախատեսված: Այդ ընթացքում մեր 4 ակումբները կմասնակցեն եվրոպական գավաթների մրցաշարերին:

Ինչպես նախորդ մրցաշրջանում, այս տարի էլ «Փյունիկն» ու «Բանանցը» սեփական հարկի տակ նախատեսված հանդիպումները կանցկացնեն «Հանրապետական» մարզադաշտում: Լուծարված «Կիլիկիայի» փոխարեն «Հրազդանում» հանդես կգա «Արարատը»: «Հրազդանում» իր մրցելույթները կշարունակի «Ուլիսը»:

Դիլիջանում եւ Գյումրիում մարզադաշտերի վերանորոգման պատճառով «Իմպուլսն» ու «Շիրակը» սեփական հարկի տակ հանդիպումներն առայժմ կանցկացնեն Իջեւանի «Արնար» մարզադաշտում: «Միկան» ու «Գանձասարը» կխաղան սեփական մարզադաշտում:

Մարտի 10-ին կտրվի ֆուտբոլի Հայաստանի գավաթի հերթական՝ 20-րդ խաղարկությունը: 1/4 եզրափակչի առաջին խաղում «Հրազդանում» «Ուլիսը» կհյուրընկալի «Արարատին», իսկ «Հանրապետականում» կկայանա «Բանանցի» եւ «Գանձասարի» մրցավեճը: Հաջորդ օրը «Շիրակն» Իջեւանում կհյուրընկալի «Փյունիկին», իսկ «Միկան» սեփական հարկի տակ ուժերը կչափի «Իմպուլսի» հետ:

Պատասխան հանդիպումները կկայանան մարտի 14-ին եւ 15-ին: Առաջին օրը «Հրազդանում» կրկին մրցավեճի կբռնվեն «Արարատը» եւ «Ուլիսը», իսկ Կապանում «Գանձասարը» կհյուրընկալի «Բանանցին»: Մարտի 15-ին «Հանրապետականում» «Փյունիկը» կմրցի «Շիրակի» հետ, իսկ Իջեւանում «Իմպուլսի» հյուրը կլինի «Միկան»:

Առաջնության մեկնարկային 2 տուրերի եւ գավաթի խաղարկության 1/4 եզրափակիչ բոլոր հանդիպումները կսկսվեն ժամը 15-ին:

## Աբրամովիչը «Չելսիի» ղեկին ցանկանում է տեսնել Գվարդիոլային

Թեեւ Կառլո Անչելոտին հայտարարել է, որ մրցաշրջանի ավարտից հետո չի պատրաստվում հեռանալ «Չելսիից», անգլիական ակումբի սեփականատեր Ռոման Աբրամովիչը նրան արդեն փոխարինող է փնտրում: Նա չի բացառում, որ սկզբում «Չելսին» կգլխավորի Գուս Հիդինկը, իսկ մրցաշրջանի ավարտից հետո թիմի ղեկը կհանձնվի «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլային:

Անգլիայի գավաթի մրցաշարում «Էվերտոնին» պարտվելուց հետո «Չելսիի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին հետեւյալն է նշել. «Երբեք կամքիս հակառակ չեմ հեռացել թիմից, ուստի այս անգամ էլ չեմ պատրաստվում նման կերպ վարվել: Իմ ճակատագրի մասին ես չպետք է մտածեմ, դրա համար մենք ակումբի սեփականատեր ունենք: Իմ գործն աշխատելն ու թիմի վիճակը բարելավելն է: Առջեւում չեմպիոնների լիգայի մրցախաղերն են: Հաղթանակը կօգնի շտկել իրավիճակը»:

Սակայն, ինչպես երեւում է, Ռոման Աբրամովիչն այլ կարծիքի է: Նրա օրոք ոչ մի մարզիչ 6 ամսից ավելի չի աշխատել «Չելսիում», եթե որեւէ մրցանակ չի շահել: Կլաուդիո Ռանյերին, Ժոզե Մոուրինյոն եւ Ավրամ Գրանտը կորցրել են աշխատանքը համապատասխան արդյունքի չհասնելու պատճառով:

Ինչ վերաբերում է Խոսեպ Գվարդիոլային, ապա այսօր նա նոր պայմանագիր է կնքելու «Բարսելոնի» հետ մինչեւ հաջորդ մրցաշրջանի ավարտը: Սակայն Գվարդիոլան նաեւ նշել է, որ իրեն նոր խթան է անհրաժեշտ մարզչական աշխատանքում: Իսկ լավագույն տարբերակը նա համարում է անգլիական պրեմիեր լիգան: Աբրամովիչը հույս ունի, որ ամռանը կհաջողվի Գվարդիոլային «Չելսի» հրավիրել: Եթե «Չելսին» չեմպիոնների լիգայի մրցաշարում պարտվի դանիական «Կոպենհագենին», ամենայն հավանականությամբ թիմը կգլխավորի Գուս Հիդինկը: Նա 2009-ին արդեն աշխատել է «Չելսիում»՝ փոխարինելով Լուիս Ֆելիպե Սկոլարիին: Նրա գլխավորությամբ անգլիացիները նվաճել են Անգլիայի գավաթը: Վերջին շրջանում Գուս Հիդինկի գործերը Թուրքիայի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում անհաջող են ընթանում: 3 անընդմեջ պարտություններից հետո նրա աշխատանքից խոսք դժգոհ են Թուրքիայում: Խոսակցություններ կան, որ ամռանը Ռոման Աբրամովիչը պատրաստվում է թիմի մի խումբ ֆուտբոլիստների վաճառել, որպեսզի փոխհատուցի այն 75 մլն ֆունտ ստեռլինգը, որ ծախսել էր հարձակվող Ֆեռնանդո Տորեսին եւ պաշտպան Դավիթ Լուիզին գնելու համար:

## Մելիքյանն այլեւս «Շիրակում» չէ

**Եղիշե Մելիքյանը փոխադարձ համաձայնությամբ խզել է պայմանագիրը «Շիրակի» հետ: Հիշեցնենք, որ հունվարին նա մեկամյա պայմանագիր էր կնքել ակումբի հետ: Չնայած դրան, նա փորձեց տեղափոխվել ուկրաինական «Կրիվբաս», սակայն փորձն անհաջողությամբ ավարտվեց:**

### ՇԱԽՄԱՏ

## Դանիելյանի հաղթական մեկնարկը

**Էլինա Դանիելյանը հաղթանակով մեկնարկեց Դոհայում սկսված շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 6-րդ փուլում: Էլինան վերջինն ավարտեց մրցավեճը ֆրանսուհի Մարի Սեբագի հետ: Հայ շախմատիստուհին իրացրեց անցողիկ զինվորի իր առավելությունը եւ 58-րդ քայլին հաղթանակ տոնեց: Իսկ Լիլիթ Մկրտչյանը մրցաշարը սկսեց շվեդ Պիա Կրամլինգի հետ ոչ-ոքի արդյունքով: Մրցակիցները հաշտություն կնքեցին 44-րդ քայլին: Դա մեկնարկային տուրում միակ խաղաղ արդյունքն էր:**

**Հաղթողի երկու գլխավոր հավակնորդների՝ Համպի Կոներուի եւ Նանա Ձագնիձեի մրցավեճն ավարտվեց վերջինիս հաղթանակով: Մարթա Ֆիեռոն պարտության մատնեց Ժժու Ձենին, Սյու Յուհուան առավելության հասավ Անտուանետա Ստեֆանովայի նկատմամբ, իսկ Մայա Չիբուրդանիձեն զիջեց Բատույագ Մոնգոնտուլին:**

**Այսօր կայանալիք 2-րդ տուրում Դանիելյանը կմրցի Չիբուրդանիձեի հետ, իսկ Մկրտչյանի մրցակիցը կլինի Ստեֆանովան:**

## «Գանձասարը» մտավ կիսաեզրափակիչ

**Կապանի «Գանձասարի» ֆուտբոլիստները հաջող են հանդես գալիս «Թուրքմենբաշու գավաթի» խաղարկությունում: Խմբային մրցաշարի 2-րդ տուրում էլ կապանցիները հաղթանակ տոնեցին: Մրցակիցը Մախաչկալայի «Անժին» 2-րդ կազմն էր: Հանդիպման ելքը վճռեց 37-րդ րոպեին 11 մետրանոց հարվածով կապանցիների խփած միակ գոլը: Հիշեցնենք, որ մեկնարկային խաղում Նորայր Գրիգորյանի խփած միակ գոլի շնորհիվ «Գանձասարը» հաղթել էր թուրքմենական «Ալթին Ասիրին»: Վաղը կապանցիները խմբային մրցաշարի վերջին խաղում ուժերը կչափեն Իրանի առաջնության 2-րդ խմբի ներկայացուցիչ «Օգաբ Հոնբադի» հետ, որը մեկնարկում ոչ-ոքի (1-1) էր խաղացել «Անժիի» 2-րդ կազմի հետ: Անկախ վերջին հանդիպման արդյունքից, Աբրահամ Խաշմանյանի սաներն արդեն նվաճել են կիսաեզրափակչի ուղեգիրը ու կշարունակեն պայքարը գլխավոր մրցանակի համար:**

## Համեստ արդյունքներ Իրանում

**Իրանում վերջնագիծը հատեց շախմատային փառատոնը, որի մասնակիցների թվում էին հայաստանցի 5 շախմատիստներ: Նրանք բավական համեստ արդյունքի հասան: Ուժեղագույնների մրցաշարում Գեւորգ Հարությունյանը 9 հնարավորից վաստակելով 5,5 միավոր, զբաղեցրեց 20-րդ տեղը: Ավարտական տուրում Գեւորգը հաղթեց Իվերի Չիխլաձեին: 4,5 միավորով 41-րդ հորիզոնականը զբաղեցրեց Արման Հայրապետյանը, որը եւս հաղթանակ տոնեց՝ առավելության հասնելով Սարասադաթ Խադեմալշարիի նկատմամբ:**

**Ուժեղագույնների մրցաշարի հաղթող ճանաչվեց բելառուսցի Ալեքսեյ Ֆյոդորովը: Նա 9 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունքի հասած վրացի Գիգա Կուպարաձեին: Հետաքրքրական է, որ ավարտական տուրում նրանք մրցեցին միմյանց հետ: Պարտիան ավարտվեց ոչ-ոքի:**

**B խմբի մրցաշարում Սարգիս Սարգսյանը 6,5 միավորով 15-րդ տեղը գրավեց: Վերջին տուրում նրա մրցակիցը խաղին չներկայացավ, ուստի հայ շախմատիստին հաղթանակ գրանցվեց: Ռաֆայել Բակունը հաղթելով Աhմադռեզա Հորմոզիին, 5,5 միավորով հանգրվանեց 33-րդ հորիզոնականում:**

**B խմբի հաղթող ճանաչվեց ադրբեջանցի Իգբալ Ռզաեւը, որը հաղթելով իր հայրենակից Մեհդի Իսկանդարովին, վաստակեց 8 միավոր: Վերջինս Նասեր Ռյահի, Ալի Պիլվաեհի եւ Ֆերայդոն Էզաթի հետ 7 միավորով բաժանեց 2-5-րդ տեղերը:**

**Կանանց մրցաշարի հաղթողը վրացի շախմատիստուհի Բելա Խոթենաշվիլին է, որը հաղթելով Գյուլնազ Ջաֆարին, ցույց տվեց բավական բարձր արդյունք՝ 9 հնարավորից 8,5 միավոր: Նույնպիսի արդյունքի էր հասել նաեւ վրացի մեկ այլ շախմատիստուհի՝ Նինո Բացիաշվիլին, որը պարտության էր մատնել Օգքայ Իբրահիմովային: Նա հաղթողին զիջեց լրացուցիչ գործակիցներով: Հայաստանի միակ ներկայացուցիչ Անգելինա Հակոբյանը 5 միավորով գրավեց 31-րդ տեղը: Նա հաղթեց Ֆաթեմի Բարգհիին:**

## Այս անգամ առանց մրցանակների

**Ընթացիկ մրցաշրջանում հայ ձյուդոյիստները նորանշանակ ռումինացի մարզչի գլխավորությամբ բավական հաջող մրցելույթներ են ունեցել: Խոսքը հատկապես վերաբերում է Հովհաննես Դավթյանին (60 կգ) եւ Արմեն Նազարյանին (66 կգ), որոնք ձյուդոյի աշխարհի գավաթի խաղարկության նախորդ փուլերում եւ «Մեծ սաղավարտի» մրցաշարում մրցանակակիրներ էին դարձել:**



**Թվում էր, թե հաղթարշավը կշարունակվի նաեւ Դյուսելդորֆում, որտեղ խաղարկվեց աշխարհի գավաթի հերթական փուլը: Սակայն այս անգամ հայ ձյուդոյիստներն անհաջող հանդես եկան: Տատամի դուրս եկած մեր 6 ձյուդոյիստներից եւ ոչ մեկին չհաջողվեց մեդալ նվաճել:**

**Առավել հաջող հանդես եկավ Հովհաննես Դավթյանը: 60 կգ քաշայինների մրցավեճում Հովհաննեսը հաջորդաբար պայքարից դուրս մղեց գերմանացի Ռոբերտ Կոպիսկեին ու չեխ Պավել Պետրիկովին եւ մտավ քառորդ եզրափակիչ: Այստեղ նրա մրցակիցն իտալացի Էլիո Վերդեն էր, որին հայ ձյուդոյիստը չկարողացավ հաղթել: Դավթյանը գրավեց 5-րդ տեղը եւ Լոնդոնի օլիմպիական խաղերի ուղեգրերի համար մղվող պայքարում իր վարկանիշային միավորների քանակը ավելացրեց 40-ով:**

**Մինչեւ 66 կգ քաշային կարգում Արմեն Նազարյանն ու Համբարձում Տոնոյանը միայն մեկական հաղթանակ տոնեցին: Ընդ որում Տոնոյանը պայքարը սկսեց նախնական փուլից, որտեղ հաղթեց չեխ Դավիթ Դուբսկիին: 2-րդ փուլում հայ ձյուդոյիստը պարտվեց ճապոնացի Մասաշի Էբինումային ու դուրս մնաց հետագա պայքարից:**

**Արմեն Նազարյանը 1/16 եզրափակչում հաղթելով մոնղոլ Խիխիգբայար Բուլդյաբաթարին, հաջորդ գոտեմարտում զիջեց ուկրաինացի Սերգեյ Դրեբոտին: Նազարյանը վարկանիշային 24 միավոր վաստակեց:**

**Մինչեւ 73 կգ քաշայինների մրցավեճում Արսեն Բաղդասարյանը նախնական փուլում հաղթելով մոլդովացի Վիկտոր Շվորոնին, 1/16 եզրափակչում պարտվեց Իսրայելը ներկայացնող Յոսեբ Պալելաշվիլուն: Իսկ Ռոբերտ Վարդանյանը պայքարից դուրս մնաց նախնական փուլում՝ պարտվելով մոնղոլ Օդբայար Գանբաատարին:**

**Հայաստանի 6-րդ պատվիրակը՝ Հակոբ Առաքելյանը (մինչեւ 100 կգ) առաջին գոտեմարտում զիջեց բրիտանացի Ջեյմս Աուստինին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շահագործվող ծրագրային ապահովման ուղեկցման բաժանորդագրության արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շահագործվող ծրագրային ապահովման ուղեկցման բաժանորդագրության արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ` Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը` 2011թ. մարտի 22-ին, ժամը 16:00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը` 2011թ. մարտի 25-ին, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2011թ. մարտի 30-ին, ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, 59-28-05, 59-28-02, ներքին` 18-05, 18-02:

**ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«22» փետրվարի 2011 թ.**

**Հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը` «Նոր Համբերդ գիտական կենտրոն»:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից` 22.11.2007թ. պետական գրանցման վկայական` 03 Ա 077927:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը` ք.Եր., Հալաբյան 34 ա /5, հեռ. 35-20-08, 091-20-69-75:
4. Իրականացված ծրագրերը.

2010թ. ընթացքում շարունակվել են ստեղծված սարքավորումներում (Գամմա, Անի Ասեկ), չափումներ: Ստացիստիկան ավելի քան 1 մլն դեպք է լայն էներգետիկ տիրույթում: Կան նախնական արդյունքներ գերբարձր էներգետիկ մասնիկների վերաբերյալ:

5. Ֆինանսավորման աղբյուրները. Ռուսաստանի Դաշնության Գիտությունների Ակադեմիայի Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի կողմից, ֆինանսավորման չափը 27900 հազ.դրամ:
6. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը`26262 հազ.դրամ:
7. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը` 26262 հազ. դրամ:

*Հաստատված է.*

«Նոր Համբերդ գիտական կենտրոն» Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2010թ.դեկտեմբերի 12-ին կայացած նիստի կողմից:

Հիմնադրամի տնօրեն` Ա. Բարսեղյան

Հաշվապահ` Ն. Մարտիրոսյան

01241708 ՀԻՄՆԱԴՐԱՄ ФОНД FUND

# Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարում են 2011թ. ստեղծագործական եւ գիտական աշխատանքի միջազգային ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

**Վաղուց արդեն բարի ավանդույթի է վերածվել Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության կողմից անցկացվող գիտական եւ ստեղծագործական աշխատանքների ամենամյա մրցանակաբաշխությունը: Այն կազմակերպվում եւ անց է կացվում համրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի, գրողների, ժուռնալիստների, նկարիչների, կոմպոզիտորների միությունների հետ համատեղ: «Մրցանակաբաշխություն-2011»-ը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա հոբելյանին: Մրցանակաբաշխության հիմնական նպատակն է` նպաստել Հայաստանի գիտական եւ ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, աջակցել երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը:**

**«Մրցանակաբաշխություն-2011»-ին, իբրեւ պարտադիր պայման կարող են մասնակցել միայն մտավորականության երիտասարդ /մինչեւ 35 տարեկան/ ներկայացուցիչները, իսկ գրողների եւ լրագրողների կողմից մրցանակաբաշխության ներկայացված ստեղծագործություններն ու հրապարակումները պետք է արտացոլեն ժամանակակից երիտասարդության կերպարը, նրանց առաջնահերթություններն ու խնդիրները, տեղն ու դերը Հայաստան երկրի կայացման, Հայրենիք-Սփյուռք կապերի առավել սերտացման ասպարեզում:**

**«Մրցանակաբաշխություն-2011»-ը համահայկական նշանակություն ունեցող միջոցառում է, որին կարող են մասնակցել Ղարաբաղի, ինչպես նաեւ հայկական սփյուռքի մտավորականության ներկայացուցիչները: Այն անց է կացվում ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ մշակույթի նախարարությունների հետ համագործակցությամբ եւ նրանց աջակցությամբ:**

**Մրցանակաբաշխության ընդհանուր ֆոնդը կազմում է 32 միլիոն դրամ:**

## Մրցանակաբաշխության պայմանները

### Գիտնականների համար

«Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին կարող են մասնակցել մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականները: Սահմանված են մրցանակներ 14 անվանակարգերում.

-ֆիզիկա
-մաթեմատիկա եւ մեխանիկա
-տեխնիկական գիտություններ
-քիմիա
-կենսաբանություն
-պատմություն
-սոցիոլոգիա
-քաղաքագիտություն եւ իրավագիտություն
-երկրաբանություն
-արվեստ, լեզու եւ գրականություն
-արեւելագիտություն
-տնտեսագիտություն
-հայագիտություն եւ ազգագրություն

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 10 միլիոն դրամ:

Մրցանակակիրները կպարգեւատրվեն մինչեւ 700 հազար դրամ դրամական պարգեւներով եւ կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ եւ ՌՀՄ պատվավոր դիպլոմների: Մրցույթին կարող են ներկայացվել միայն 2008-2009-ին հրատարակված գիտական հոդվածների շարքը եւ մենագրությունները, կամ արտոնագրված աշխատանքները:

Ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի այն կազմակերպության գիտական խորհրդի որոշումը, որտեղ աշխատում է հայտատուն: Փաստաթղթերը կարող են ներկայացվել նաեւ տվյալ բնագավառում գործող որեւէ այլ կազմակերպության գիտական խորհրդի կողմից: Մրցույթի արդյուքները կհրապարակվեն 2011թ-ի ապրիլ ամսին:

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» գրասենյակից, կամ Հիմնադրամի կայքի միջոցով` http://sdfund.sci.am:

Հասցեն` 0019, Մարշալ Բաղրամյանի պող. 24, Երեւան, Հայաստանի հանրապետություն:

Հեռ. +37410 527530, +37410 527031

### Գրողների համար

Մրցանակաբաշխությունը կանցկացվի «Արդի հայ արձակ. 21-րդ դար» թեմայով հետեւյալ անվանակարգերում`

-վեպ
-վիպակ
-պատմվածաշար

Կանոնակարգի համաձայն, մրցույթին առաջարկվող երկերը գնահատվում են գեղարվեստական մակարդակի ու թեմաների այժմեականության եւ ինքնատիպության, ինչպես նաեւ բարոյափիլիսոփայական եւ հոգեւոր արժեհամակարգի տեսանկյուններից:

Այս տարի, իբրեւ պարտադիր պայման, մրցանակային ստեղծագործությունները պետք է արտացոլեն ժամանակակից երիտասարդության կերպարը, հիմնախնդիրները, նրա տեղն ու դերը մեր երկրի կայացման գործում:

Բոլոր տեքստերը պետք է լինեն անտիպ եւ ներկայացվեն ծածկանունով: Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի գրողները:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Նախատեսված են հետեւյալ մրցանակները

▼ Վեպի համար /նվազագույն ծավալը` 80 համակարգչային էջ/ -2 միլիոն դրամ

▼ Վիպակի համար /նվազագույն ծավալը` 50 համակարգչային էջ/ -1,5 միլիոն դրամ

▼ Պատմվածաշարի համար /մինչեւ 40 համակարգչային էջ/ -1,5 միլիոն դրամ:

Բոլոր նյութերը անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Գրողների միություն, աշխատակազմի ղեկավարին` մինչեւ 2011-ի սեպտեմբերի 1-ը:

Հասցե` Երեւան, Մարշալ Բաղրամյան 3:

Հեռախոս` 56-18-31:

### Նկարիչների համար

Հայ կերպարվեստի զարգացմանը նպատակաուղղված կերպարվեստի լավագույն ստեղծագործությունների մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Նկարիչների միության անդամները, որոնց տարիքը 2011-ի դրությամբ չի գերազանցում 35-ը:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Սահմանված են հետեւյալ մրցանակները.

1. Գեղանկարչություն - 5 մրցանակ` յուրաքանչյուրը` 500 հազար դրամ
2. Քանդակ - 2 մրցանակ յուրաքանչյուրը` 400 հազար դրամ
3. Գրաֆիկա- 2 մրցանակ յուրաքանչյուրը` 250 հազար դրամ
4. Դեկորատիվ կիրառական արվեստ - 1 մրցանակ- 300 հազար դրամ

Մրցանակային ֆոնդի 25% կտրամադրվի ցուցահանդես-մրցույթի կազմակերպման եւ ներկայացված գործերի կատալոգի հրատարակման համար:

Մրցութային հանձնաժողովը իրավասու է մրցանակային ֆոնդը բաշխել այլ կերպ, ըստ փաստացի ներկայացված աշխատանքների որակի եւ ճյուղերի: Աշխատանքները ներկայացնել Հայաստանի նկարիչների միություն` 2011-ի հունիսի 25-ից մինչեւ հուլիսի 1-ի ժամը 16-ը:

Հասցե` Երեւան, Աբովյան 16:

Հեռախոս` +374 10 56-47-24, 56-48-53

### Կոմպոզիտորների եւ երաժշտագետների համար

Լավագույն կոմպոզիտորական եւ երաժշտագիտական ստեղծագործությունների մրցույթին կարող են մասնակցել ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում ապրող երիտասարդ /մինչեւ 35 տարեկան/ հայ կոմպոզիտորներ եւ երաժշտագետներ, ովքեր ունեն պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

### Կոմպոզիտորական արվեստի ասպարեզում`

«Հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ստեղծագործական ձեռքբերում» ճյուղում ներկայացվում են ստեղծագործություններ, գրված հետեւյալ ժանրերում.

ա. Վոկալ-սիմֆոնիկ, կոնցերտային երաժշտության ժանրում գրված ստեղծագործություն /15-20 րոպե/ -մրցանակային ֆոնդը` 1 միլիոն 280 հազար դրամ

բ. Գործիքային անսամբլների համար /դուետ, տրիո, կվարտետ եւ այլն/ գրված սեղծագործություն /12-15 րոպե/ - մրցանակային ֆոնդը` 1 միլիոն 100 հազար դրամ

գ. Խմբերգային, վոկալ-գործիքային երաժշտության ժանրում գրված ստեղծագործություն /8-10 րոպե/ -մրցանակային ֆոնդը` 750 հազար դրամ

### Երաժշտագիտության բնագավառում`

«Հայ երաժշտության զարգացման նոր հեռանկարներ» անվանակարգում ներկայացվում են` գիտական հոդվածների ժողովածու, երաժշտական հրապարակախոսություն, մենագրություն: Մրցանակային ֆոնդը` 900 հազար դրամ:

Մրցանակի արժանացած ստեղծագործությունների կատարման կազմակերպման, ինչպես նաեւ մրցույթի կազմակերպման այլ ծախսերի համար կօգտագործվի մրցանակային ընդհանուր ֆոնդի 25%:

Երաժշտագիտական աշխատություններն ընդունվում են հրատարակված օրինակի տեսքով;

Կոմպոզիտորական ստեղծագործություններն ընդունվում են համակարգչային շարվածքի եւ/ կամ բավարար ընթեռնելի ձեռագրի տեսքով:

Կարող են ներկայացվել նաեւ ստեղծագործական ձայնագրություններ` եթե այդպիսիք առկա են:

Յուրաքանչյուր հեղինակից ընդունվում է մեկ գործ` մեկ անվանակարգում:

Մրցույթին չեն կարող ներկայացվել նախկինում մրցանակ շահած գործեր: Աշխատանքներն ընդունվում են մինչեւ 2011-ի մայիսի 31-ը` Հայաստանի Կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության քարտուղարությունում:

Հասցե` Երեւան, Դեմիրճյան 25:

Հեռ.` 52-47-02

### Լրագրողների համար

Լրագրողական լավագույն հրապարակումների մրցույթ` «Երիտասարդությունն է Հայաստանի Հանրապետության հույսը, հայության ապագան» թեմայով:

Մրցույթին ներկայացվող նյութերը պետք է արտացոլեն հայ երիտասարդության առաջնահերթություններն ու խնդիրները` Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդման, երկրի պաշտպանունակության հզորացման, Հայրենիք-Սփյուռք կապերի առավել սերտացման ասպարեզում:

Հրապարակումների հերոսը ժամանակակից հայ երիտասարդությունն է` հայրենանվեր իր գործունեությամբ, նպատակներով, երազանքներով ու մտահոգություններով, տարբեր` տնտեսության, գիտության, մշակույթի, կրթության եւ այլ ոլորտներում ունեցած ներդրումներով:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի եւ Սփյուռքի լրատվամիջոցները, Հայաստանի ժուռնալիստների միության անդամները:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Սահմանվում են հետեւյալ մրցանակները.

1. Պարբերական մամուլ - երկու մրցանակ` 750 հազարական դրամ
2. Հեռուստահաղորդումներ - երկու մրցանակ` 550 հազար-ական դրամ
3. Ռադիոհաղորդումներ - մեկ մրցանակ` 360 հազար դրամ
4. Ցանցային ԶԼՄ-ներ - մեկ մրցանակ` 360 հազար դրամ
5. Սփյուռքահայ մամուլ - մեկ մրցանակ` 360 հազար դրամ

Սահմանվում են նաեւ 3 մրցանակ Ռուսաստանի հայերի միության Հայաստանում ծավալված գործունեության լավագույն լուսաբանման համար:

1. Պարբերական մամուլ - մեկ մրցանակ` 360 հազար դրամ
2. Հեռուստահաղորդումներ - մեկ մրցանակ` 360 հազար դրամ
3. Ռադիոհաղորդումներ - մեկ մրցանակ` 360 հազար դրամ

Նյութերի ներկայացման վերջին ժամկետը 2011թ. օգոստոսի 31-ն է: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն 2011թ. սեպտեմբերին:

Մրցույթի նյութերն ուղարկել կամ անձամբ ներկայացնել Հայաստանի ժուռնալիստների միություն:

Հասցե` Պուշկինի 3ա, հեռ. 56-12-76:

***Ծանոթություն***

Մրցույթներն անցկացնող կազմակերպությունները կարող են մրցույթի կազմակերպչական ծախսերի համար օգտագործել մրցանակային ֆոնդի մինչեւ 10 տոկոսը, իսկ Կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը, Նկարիչների միությունը, ելնելով մրցույթի կազմակերպման հետ առնչվող ոլորտի առանձնահատկություններից, մինչեւ` 25 տոկոսը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 22.2.2011, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: